« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԵՏՐՈՎԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»ՊՈԱԿ-Ի

2024-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն *4*

Դպրոցի առաքելությունը *4*

Դպրոցի գործունեությունը *5*

**ՄԱՍ 1: Իրավիճակի վերլուծություն:Ուժեղ և թույլ կողմերի բացահայտում,դրանցում առկա հնարավորությունները և վտանգները** *9*

1.1 Հաստատության շենքայի պայմաններ *11*

1.2 Հաստատության նյութատեխնիկական բազա *11*

1.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն *21*

Դպրոցի տնօրենի կադրային քաղաքականություն *28*

1.4 Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների,ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ *32*

1.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացում *37*

1.6 Օգտագործվող ՏՀՏ,կրթական և տեղեկատվական այլ նորարարություններ *42*

1.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն *46*

1.8 Բազմակարծիք,ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն *52*

1.9 աշխատակազմի արժեվորման,խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն *56*

1.10 ՈՒսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծություն *59*

ՈՒսումնական միջավայր *64*

Դպրոցի գործունեությունը կանոնակարգողի իրավական ակտեր: *65*

**ՄԱՍ2.Ծրագրի նպատակի եվ խնդիրների սահմանում,գործողություններ,ժամանակացույց,պատասխանատուներ, գնահատման չափանիշներ, հնարավոր ռիսկերը,անհարժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաներ,վերահսկողության մեխանիզմներ** *65*

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները *70*

Զարգացման ծրագրի նպատակները, խնդիրները, գործողությունները, ժամանակացույցերը,պատասխանատուները,գնահատման չափանիշները,հնարավոր ռիսկերը, անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաները,վերահսկողության մեխանիզմները ըստ ոլորտների *77*

Ակնկալվող արդյունքներ *86*

Վերահսկողության մեխանիզմներ *86*

Եզրափակում *92*

## ՆԱԽԱԲԱՆ

Հայրենիքի պաշտպանության և պետականության ձևավորման հիմնաքարը կրթությունն է, որը սկսվում է դեռ վաղ տարիքից և չունի ավարտի սահման:Յուրաքանչյուր ոք կարող է կրթվել և ինքնակրթվել այնքան ժամանակ, որքան կցանկա: Կրթությունն այն զենքն է, որով հնարավոր է դառնում ձևավորել մասնագիտությունների տեր անձանց,ովքեր կարող են կերտել մեր երկրի վաղվա ապագան:Կրթությունը մի գործընթաց է, որի շնորհիվ իրականացվում է անհատի,հասարակության և պետության շահերից ելնող ուսուցումն ու դաստիարակությունը, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելուն և սերունդներին փոխանցելուն:

«ՀՀ Լոռու մարզի Պետրովկայի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝Ուսումնականհաստատություն կամ դպրոց) 2024-2029 զարգացման ծրագիրը կազմվել է ուսումնական հաստատության իրավիճակի վերաբերյալ առկա տվյալների,ուժեղ և թույլ կողմերի վերլուծության արդյունքում:

Սույն զարգացման ծրագիրը հանդիսանում է « ՀՀ Լոռու մարզի Պետրովկայի հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ի զարգացման ռազմավարական նշանակության փաստաթուղթը:

Զարգացման ծրագրի նպատակն է պլանավորել ուսումնական հաստատության հետագա զարգացման ընթացքը՝լուծելով դպրոցի առջև դրված խնդիրները արդյունավետ և օպտիմալ եղանակներով,հասնելով ցանկալի արդյունքի՝հիմնվելով<<ՀՀ Լոռու մարզի Պետրովկայի հիմնական դպրոց>>պետական ոչ առևտրային կազմակերպության իրավիճակի օբյեկտիվ վերլուծության վրա:

### Դպրոցի առաքելությունը

Ժամանակակից աշխարհում կրթության փոփոխությունը դարձել է ժամանակի հրամայական ու պահանջ: Տեխնոլոգիաների արագ զարգացման պայմաններում ապագայի կրթական կարիքները կանխատեսելը դարձել է բավականին բարդ: Ուստի անհրաժեշտ է ունենալ կրթական ճկուն, դինամիկ զարգացող համակարգ: Դպրոցը պետք է ունենա այնպիսի առաջնորդներ ու մանկավարժներ,որոնք ունակ են նորն ընկալելու, ինքնակրթվելու և ժամանակի պահանջներին համապատասխանելու: Դպրոցում ուսանելը հասարակության բոլոր անդամների արժանապատիվ կեցության երաշխավորման կարևորագույն նախադրյալներից է:

Կրթությունը մի գործընթաց է,որի շնորհիվ իրականացվու է անհատի,հասարակությա և պետության շահերից ելնող ուսուցումն ու դաստիարակությունը, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելուն և սերունդներին փոխանցելուն:Կրթություն ստանալը և ընտանեկան միջավայրում հասակ առնելը յուրաքանչյուր երեխայի անքակտելի իրավունքներն են՝ անկախ նրանց կարողություններից կամ խոցելիություններից: Երեխան չի կարող լիարժեքորեն իրացնել իր ներուժը, եթե չկա բարենպաստ միջավայր: Մեր խնդիրն է ապահովել կրթության իրավունքի լիարժեք իրացման համար նպաստավոր միջավայր:

Աշակերտները դպրոցում պետք է ձեռք բերեն այնպիսի գիտելիքներ, ունակություններ ու կարողություններ, որոնք հնարավորություն կտան ապագայի անծանոթ պայմաններում արագ կողմնորոշվել ու լինել մրցունակ, թե հայրենիքում թե հայրենիքի սահմաններից դուրս: Վաղվա քաղաքացին և այսօրվա մեր աշակերտը պետք է առաջին հերթին սովորի ապրել, ապրել հաշտ ինքն իր ու հասարակության հետ: Պետք է ունենա քննադատական, վերլուծական, համեմատական, ստեղծագործական մտածողություն, մշտապես սովորելու ու կատարելագործվելու կարողություն, ցանկություն ու հնարավորություն:

ՀՀ Հանրակրության մասին օրենքի հոդված 4 սահմանում է.«Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

1. Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:
2. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը»:
Դպրոցի առաքելությունը սովորելու ունակություն ունեցող, սովորելն արժևորող քաղաքացիներ պատրաստելն է, ազգային հենքի վրա կրթական ոլորտի օրենսդրության և իրավական ակտերի պահանջներին համապատասխան կրթական ու դաստիարակչական աշխատանքների որակյալ իրականացումն է:
Դպրոցի կառավարումը, դպրոցում աշխատելը պահանջում է անսահման նվիրում, մեծ պատասխանատվություն: Դպրոցն այն ամրոցն է , որի ամրությունն ու անխոցելիությունը ապագայի հզոր հայրենիքի գրավականն է: Այստեղ է կերտվում հայրենիքի ուժը, զարգացման առաջնահերթությունն ու ապագայի իրական տեսլականը

## Դպրոցի գործունեությունը:

Պետրովկայի հիմնական դպրոցը հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող պետական ոչ առևտրական կազմակերպություն է: Հաստատությունն իր գործունեությունը ծավալում է ղեկավարվելով. «Կրթության մասին», «Հանրակրթության մասին»,«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»,«Աշխատանքային օրենսգրքով»,դպրոցի կանոնադրությամբ, օրինակելի իրավական ակտերի՝ հաստատության հաստատած տարբերակներով,ներքին իրավական ակտերով, Հանրակրթական պետական չափորոշիչով, «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Երեխաներիիրավունքներիմասին»կոնվենցիայով ,ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:
Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է, իսկ նպատակը՝ հանրակրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների և կրթական գործընթացին առավելագույն մասնակցության ապահովումն է՝ յուրաքանչյուր սովորողի՝ այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների զարգացման առանձնահատկություններին համապատասխան:
Դպրոցը նախկինում հանդիսացել է Միխայելովկայի միջնակարգ դպրոցի մասնաճյուղ , իսկ 2003թ. «Դպրոցների բարելավման» ծրագրի շրջանակներում ձևավորվել է որպես առանձին հիմնական դպրոց:
Դպրոցի ամենօրյա գործունեությունն ուղղված է յուրաքանչյուր սովորողի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության խթանմանն ու կրթական որակյալ ծրագրերի իրագործմանը:
Այս զարգացման ծրագիրը կազմվել է հաշվի առնելով ինչպես վերջին տարիների ներքին և արտաքին գնահատումների արդյունքները, վերլուծությունները՝ այնպես էլ վերջին ամիսներին դպրոցի առջև ծառացած նոր մարտահրավերները: Բարեփոխումների, արմատական փոփոխությունների կայացումը պայմանավորված է ոչ միայն լավ մշակված օրենսդրական պահանջներով, այլ նաև գիտակցված ու հետևողական իրագործմամբ: Ուստի այս փուլում շատ կարևոր է դպրոցի տնօրենության , ուսուցչկան համակազմի, ծնողական համայնքի, աշակերտական համակազմի միջև համագործակցային և մասնակցային միջավայրի ստեղծումն ու միասնական նպատակի իրագործումը: «ՀՀ Լոռու մարզի Պետրովկայի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2024-2029 թթ. ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.09.2022թ.«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա

հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու մասին» հրաման N35-Ն պահանջներին համապատասխան:
Ղեկավարվելով վերը նշված հրամանի դրույթներով՝ դպրոցի զարգացման ծրագրի մշակման նախապատրաստական փուլում հիմք են ընդունվել մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների կողմից ներկայացված առաջարկները:

**Մանկավարժական խորհրդի** կողմից ներկայացվել են հետևյալ առաջարկները.
1. Լաբորատորիայի և սմարթ կաբինետի ստեղծում, դիդակտիկ պարագաների ձեռքբերում
2. Մանակավարժական համակազմի վերապատրաստում

**Ծնողական խորհրդի** կողմից ներկայացվել են հետևյալ առաջարկները.
1. Դպրոցի կոսմետիկ վերանորոգում,բակի բարեկարգում
2. Աշակերտական գույքի նորացում

**Աշակերտական խորհրդի** կողմից ներկայացվել են հետևյալ առաջարկները.
1.Դպրոցի տարածքում կառուցել բացօթյա մարզահրապարակ, սպորտդահլիճը համալրել անհրաժեշտ մարզագույքով:

Դպրոցն այժմ գործում է 2003թ կառուցված տիպային շենքում՝ Պետրովկա գյուղի 2փ.,1նրբ.,2տ. հասցեում: Դպրոցին հատկացված շենքը համապատասխանում է տիպային դպրոցներին ներկայացվող պահանջներին և հիմնական դպրոցի **կրթական կարիքների լիարժեք բավարարմանը**:
Դպրոցի կառավարման մարմիններն են՝ ՀՀ Կառավարությունը, ՀՀ Լոռու մարզպետարանը, կոլեգիալ կառավարման մարմինը ՝ խորհուրդը /բաղկացած է 14 անդամներից/, գործադիր մարմինը ՝ ի դեմս տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի :
Դպրոցում գործող խորհրդակցական մարմինների հետ աշխատանքներն իրականացվում են հերթական և արտահերթ ռեժիմներով, մասնակցային ու համագործակցային եղանակներով:
Դպրոցում գործում են հետևյալ խորհրդակցական մարմինները.
Կառավարման խորհուրդ

- Մանկավարժական խորհուրդ
- Աշակերտական խորհուրդ
- Ծնողական խորհուրդ
- Առարկայական մասնախմբեր:

Կառավարման խորհրդի անդամները ակտիվ մասնակցություն ունեն ինչպես խորհրդակցական մարմնի լիազորություններից բխող աշխատանքների իրականացմանը, այնպես էլ՝ դպրոցի կազմակերպչական, կրթադաստիարակչական տարբեր միջոցառումներում: Կառավարման խորհրդի անդամները գործում են համաձայն խորհրդի աշխատակարգի և ժամանակացույցի: Պարբերաբար խորհրդի քննարկմանն են ներկայացվում ուսումնական հաստատությանն առնչվող կարևոր փաստաթղթեր՝ օրինակ ֆինանսական հաշվետվություններ / վարչատնտեսական մասի համակարգող/, ուսումնադաստիարակչական աշխատանքների պլաններ, հաշվետվություններ, մանկավարժահոգեբանական աջակցությունների կարիքի գնահատման արդյունքներ, ներքին կարգապահական կանոնները ,ներքին և արտաքին գնահատման արդյունքները նայլն: Կառավարման խորհրդի նիստերն իրականացվում են հեռավար և առկա ձևաչափերով:
Մանկավարժական խորհուրդը բաղկացած է ուսումնական հաստատության բոլոր մանկավարժական աշխատողներից, ծնողական կոմիտեի նախագահից: Մանկավարժական խորհուրդը քննարկում է օրենքով, դպրոցի կանոնադրությամբ իրեն վերապահված հարցերը՝ առավելապես հանրակրթության

պետական չափորոշչի պահանջների համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման, ուսումնադաստիարակչական աշխատանքների, սովորողների առողջության, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների անհատական ուսուցման պլանների, կրթության որակի ապահովման հետ կապված հարցերը: Մանկավարժական խորհրդի նիստերի մասին սահմանված ժամկետներում մասնակիցները ծանուցվում են, նիստերը բաց են խորհրդակցական ձայնի իրավունք ունեցողների համար:

Աշակերտական խորհուրդը կարևոր ու առանցքային դերակատար պետք է լինի ինչպես ժողովրդավարական արժեքների կրթման գործնական կիրառության համար, այնպես էլ՝ որպես խորհրդակցական մարմին, որը ներգրավված է դպրոցական կյանքի կարևորագույն որոշումների ընդունմանը: Կարևոր է աշակերտական խորհրդի ձևավորման թափանցիկությունը, աշակերտական խորհրդի անդամների իրազեկվածությունն ու գրագիտությունը, հետաքրքրվածությունն ու մասնակցություն ունենալու կամքը: Այս ուղղությամբ իրականացվում են և նախատեսվում են իրականացնել զրույցներ , քննարկումներ, իրավական գրագիտության բարձրացման աշխատանքներ:

Ծնողական խորհուրդը ձևավորվում է սահմանված կարգով , գործուն մասնակցություն է ունենում դպրոցի կյանքում: Ըստ անհրաժեշտության հրավիրվում են դասարանական , դպրոցի և համադպրոցական՝ ընդհանուր ծնողական խորհրդի նիստեր: շատ կարևոր է առողջ համագործակցային մթնոլորտի ապահովումը: Կարևոր է նաև , որ ծնողխորհուրդը գիտակցի իր դերն, իմանա իր հնարավորությունները և բացի պահանջատիրական կեցվածքից հանդես գա նաև աջակցողի, նախաձեռնողի ու մասնակցի դերում:

Դպրոցում գործում են երեք առարկայական մասնախմբեր: Բոլոր ուսուցիչներն ընդգրկված են առարակայական մասնախմբերում: Մասնախմբերի գործունեությունը շատ կարևոր է հատկապես կրթական բարեփոխումների այս ժամանակաշրջանում, քանի որ ուսուցիչներին առավել հաճախ է անհրաժեշտ լինում իրավական և մեթոդական աջակցություն ցույց տալ: Տնօրենությունը պարբերաբար իրազեկում է մասնախմբերի նախագահներին նորարարությունների մասին, խրախուսում է ուսուցիչների մասնակցությունն ու ակտիվությունը, մասնակցում է առարակայական մասնախմբերի նիստերին: Վերհանված հարցերն ըստ հնարավորության լուծում են ստանում, ըստ անհրաժեշտության ՝ քննարկվում են մանկավարժական խորհրդի նիստերում:

Դպրոցը իր գործունեությամբ համապատասխանում է **պետության կրթական քաղաքականության միտումներին**՝ նոր ներդրված չափորոշիչների պահանջների կատարմամբ:Կրթության որակի և սովորողների առաջադիմությունը խրախուսելու նպատակով համագործակցում է ուսումնական գործընթացի շահառուների հետ և ներգրավվում է համայնքին: Ծնողները ժամանակին իրազեկվում են ուսումնական գործընթացի մասին,մասնակցում են կառավարման գործընթացին՝ներկայացնելով իրենց դիտարկումներն ու առաջարկները:Նախագծային և այլ աշխատանքների իրականացման ժամանակ իրականացվում են համայնքի կարիքների ուսումնասիրություն և վերլուծություն՝ հետագայում օգտագործելով թեմաների ընտրության ժամանակ:Դպրոցը արդյունավետ համագործակցում է անչափահասների գծով,մանկավարժահոգեբանական կառույցների հետ:

Նոր ներդրվող չափորոշչային պահանջներով պայմանավորված ուսումնական գործընթացի իրականացման համար արդեն առաջացել են լրացուցիչ դժվարություններ: Ուստի կա դասասենյակների ավելացման, լաբորատորիայի համար տարածք հատկացնելու կարիք: Այս կարևոր և անհրաժեշտ պահանջների կատարման համար անհրաժեշտ է շենքի հիմնանորոգում /դասասենյակների ավելացում/: Այս և մի շարք այլ խնդիրների լուծման համար անհրաժեշտ է համակարգային մոտեցում:

Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից և ենթակայությունից:

Նոր ներդրվող չափորոշչային պահանջները նպատակաուղղված է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը: Ըստ այդմ անհրաժեշտ է.

1. յուրաքանչյուր աշակերտի կրթական կարիքներին հարմարեցված միջավայր
2. լաբորատոր գույքով և նյութերով հագեցած լաբորատորիա
3. Հարմարեցված սանհանգույցներ, լայն միջանցքներ, թեքահարթակներ, ԿԱՊԿՈՒ ունեցող աշակերտների համար հարմարեցված և կահավորված սենյակ
4. Ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաներով հագեցած համակարգչային սենյակ, քանի որ սովորողների թվային և մեդիա կարողունակությունների ձևավորման անհրաժեշտությունը թե տարրական , թե հիմնական կրթական աստիճաններում դառնում է առաջնահերթություն: Ներկա դասասենյակը, քիչ քանակով տարբեր մաշվածության համակարգիչներով, չի կարող ապահովել ժամանակակից մարտահրավերներին
5. Մարզագույք
6. Առարկայական դասասենյակներ՝ համապատասխան դիդակտիկ նյութերով, հարմարավետ գույքով:

Դպրոցն ունի անցած ուսանելի ճանապարհ, լավ վարկանիշ՝ շնորհիվ մանկավարժական որակյալ կադրերի, ավանդույթներ, որոնք պահպանման ու վերականգնման են արժանի: Մրցունակ է: Սակայն անհրաժեշտություն կա համագործակցությունների ընդլայնման, նոր գաղափարների, ստեղծագործ մոտեցումների, միջազգային ու հանրապետական, մարզային ու համայնքային իրադարձություններին, գիտաժողովներին, քննարկումններին, կրթական իրադարձություններին առավել ակտիվ մասնակցության:

Դպրոցում աշխատում են փորձառու և նվիրյալ աշխատակիցներ, սակայն կա նաև կադրային ճկուն քաղաքականության, պարբերաբար որակյալ կադրերով աշխատանքային թիմը համալրելու անհրաժեշտություն:

Ուսուցիչների փորձառությունն ու գիտելիքներն անվիճելի առավելություններ են, սակայն նորարական մոտեցումներ կիրառելը, ժամանակի հրամայականներին հետևելը երբեմն դժվար է իրագործել:

**Ստորև ներկայացվում է դպրոցի ներկազմակերպական կառուցվածքը.**

1. Կառավարման միացյալ խորհուրդ՝ բաղկացած 14 անդամներից
2.Առարկայական մեթոդական միավորումներ՝
 ա/հումանիտար և հասարակագիտական առարկաների
 բ/բնագիտամաթեմաթիկական
 գ/տարրական կրթության
3.Մանկավարժական խորհուրդ՝բաղկացած 10 անդամից
4.Ծնողական խորհուրդ՝ բաղկացած 9 անդամից
5.Աշակերտական խորհուրդ՝ բաղկացած 7 անդամից
6. Տնօրեն-1
7. Հոգեբան-1
8. Ուսուցչի օգնական-1
9. Զինղեկ-1
10. Հաշվապահ-1

| |
|---|
| ՈՒսումնաօժանդականձնակազմ |
| Տնտեսվար-1 |
| Գրադարանավար-1 |
| Էլեկտրոնային դասավանդման ապահովման մասնագետ- 1 |

| |
|---|
| Պահակ-2 |
| Հավաքարար-1 |
| Ջեռուցման համակարգի սպասարկման մասնագետ-1 |
| Խոհարար-1 |

Կրթական գործընթացի մասնակիցներն ունեն առաքելություն՝ ստեղծելու բարենպաստ կրթական միջավայր, համագործակցելու, դպրոցի առօրյան առավել հագեցած դարձնելու, նախաձեռնություններով հանդես գալու:

Այսպիսով կրթական գործունեության իրագործման ընթացքում սույն զարգացման ծրագրով նախատեսվում է.

Ապահովել յուրաքանչյուր սովորողի մտավոր, ֆիզիկական և սոցիալական բնականոն զարգացումը:

Քայլեր ձեռնարկել արժանապատիվ, առանց բռնության ու անվտանգ միջավայրի ապահովման ուղղությամբ:

Յուրաքանչյուրի ընդունակություններին, կարողություններին առողջությանը համապատասխան՝ հարմարեցված միջավայրով ապահովում՝ ըստ հնարավորության
դաստիարակել ապագայի հստակ տեսլական ունեցող քաղաքացիներ:
Կարևորել առողջ ապրելակերպի ու մասնագիտական կողմնորոշման ուղղված ձեռնարկումները:
Կարևորել մնայուն արժեքների գիտակցումը, ձևավորել հայրենասիրություն, հարգանք ազգային և համաշխարհային մշակութային արժեքների նկատմամբ:
Կարևորել ամուր ընտանիքների, հանդուրժողականության ու հարգանքի դերը :

Դպրոցի զարգացման ծրագիրը պլանավորված գործողությունների ու ներդրումների միասնական համալիր է, որն ուղղված է որոշակի ժամանակահատվածում նախանշված նպատակների ու խնդիրների իրագործմանը, միջազգային ու ազգային կրթական պահանջների բավարարմանը: Չնայած ներկայացված զարգացման ծրագրերի վերաբերյալ բացասական եզրակացություններին՝ անգամ այդ կարևոր փաստաթղթի բացակայության պայմաններում դպրոցը շարունակում է նախանշված նպատակների ու խնդիրների իրագործումը:

## ՄԱՍ 1: ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ: ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ, ԴՐԱՆՑՈՒՄ ԱՌԿԱ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐԸ

«ՀՀ Լոռու մարզի Պետրովկայի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար նախ անհրաժեշտ է վերլուծել առկա իրավիճակը,բացահայտել ուժեղ և թույլ կողմերը, վերհանել առկա հիմնախնդիրները: Վերլուծությունը համակարգված իրականացնելու համար նպատակահարմար է այն կատարել ըստ որոշակի ոլորտների՝ առավելագույնս ընդգծելով դպրոցի ուժեղ և համեմատաբար թույլ կողմերը:
Համաձայն լիցենզիաների՝դպրոցն իրավունք ունի իրականացնել հետևյալծրագրերը՝
Տարրական հանրակրթական 30 սահմանային տեղ,
հիմնական հանրակրթական 40 սահմանային տեղ:
Դպրոցը միահերթ, աշխատանքային շաբաթը՝հնգօրյա:

Ստորև ներկայացվում է դասարանների մասին տեղեկատվություն.

| Դասարաններ | Դասարանների թիվը 2022-2023 | Սովորողներիթիվը 2022-2023 | Դասարանների թիվը 2023-2024 | Սովորողներիթիվը 2023-2024 |
|---|---|---|---|---|
| 1-ին դասարան | 0.5 | 1 | 1 | 6 |
| 2-րդ դասարան | 0.5 | 6 | 1 | 1 |
| 3-րդ դասարան | 0.5 | 1 | 0.5 | 7 |
| 4-րդ դասարան | 0.5 | 2 | 0.5 | 1 |
| 5-րդ դասարան | 0.5 | 1 | 1 | 3 |
| 6-րդ դասարան | 0.5 | 1 | 0.5 | 1 |
| 7-րդ դասարան | 1 | 6 | 1 | 1 |
| 8-րդ դասարան | 1 | 2 | 0.5 | 6 |
| 9-րդ դասարան | - | 0 | 1 | 3 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 5 | 20 | 7 | 29 |

Ստորև ներկայացվում է դպրոցի գրադարանային ֆոնդի վերաբերյալ տեղեկատվություն.

| Գրքերի տեսակ | Չափման միավոր | Քանակ |
|---|---|---|
| Դասագրքեր | հատ | 803 |
| Գեղարվեստականևն ուսումնա-մեթոդական | հատ | 850 |
| Տեղեկատվական | հատ | 65 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 1718 |

ԴՊՐՈՑԻ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ,ՄԱՐԴԿԱՅԻՆՌԵՍՈՒՐՍՆԵՐ

| | Վարչականև ուսումնաօժանդակ անձնակազմ | Հաստիքների ընդհանուր քանակ | Հաստիքը զբաղեցնող աշխատակիցն երի քանակ | Հաստիքը զբաղեցնող աշխատակիցն երի ընդհանուր դրույք |
|---|---|---|---|---|
| Վարչատնտեսական անձնակազմ | | | | |
| | տնօրեն | 1 | 1 | 1.0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | հաշվապահ | 1 | 1 | 1 |
| | վարչատնտեսական համակարգող | 0,5 | 1 | 0,5 |
| Մանկավարժականաշխատողներ | | | | |
| | Հոգեբան | 0,5 | 0 | 0,5 |
| | Ջինդեկ | 0,5 | հեռավար | 0,5 |
| | Գրադարանավար | 0.75 | 0 | 0.75 |
| | Ուսուցչի օգնական | 0.5 | 0 | 0.5 |
| | Ուսուցիչներ | 9.7 | 8 | 9.7 |
| | Ուսումնաօժանդականձնակազմ | | | |
| | Հավաքարար | 1 | 1 | 1 |
| | Համակարգչային օպերատոր | 1 | 1 | 1 |
| | Քաղ.պաշտպանություն | 0.3 | 1 | 0.3 |
| | պահակ | 2 | 2 | 2 |
| | Խոհարար-օգնական | 0.5 | 1 | 0.5 |
| | Տնտեսվար | 1 | 1 | 1 |

1.1 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1.2 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

ՀՀ Լոռու մարզի Պետրովկայի հիմնական դպրոցի շենքը շահագործման է հանձնվել 2003 թվականին:Դպրոցը մի հարկանի է ,շենքը զբաղեցնում է 401 քառ․մտարածք,ունի 1600 քառ․մ ցանկապատված բակային տարածք:Բարեկարգ է, մասնակի վերանորոգված և հնարավորինս հարմարեցված: Դպրոցում ուսումնառությունը կազմակերպվում է միահերթ: Հանրակրթական լիցենզիայով սահմանված աշակերտների թիվը 70 է՝ ընդ որում տարրական հանրակրթական լիցենզիայով սահմանված տեղերը 30 են, իսկ հիմնականում՝40 : 2023-2024 ուսումնական տարեսկզբին դպրոցում սովորում է 29 աշակերտ որից տարրական օղակում սովորում է 15 աշակերտ, հիմնական օղակում՝14: Աշակերտների թիվը նախորդ ուս.տարվա նկատմամբ աճել է 9-ով , որը պայմանավորված է համայնքի բնակչության սոցիալտնտեսական բավարար իրավիճակով և արտագաղթի բացակայությամբ: Դպրոցի 9 ուսուցիչների համար ուսուցչանոցին հատկացված տարածքը կազմում է 25 քառ.մ: Ուսուցչանոցն ապահովված է անհրաժեշտ գույքով, ինտերնետ կապով, համակարգչով և պատճենահանող սարքով: Դպրոցում կա 7 դասասենյակ, մեկ համակարգչային սենյակ/որը ծառայում է նաև ՆԶՊ կաբինետ/, ժամանակակից խոհանոց- ճաշարան, սննդի պահեստ, գրադարան, մեկ միջոցառումների դահլիճ / որը ծառայում է նաև որպես սպորտդահլիճ-81 քառ.մ՝ հարմարեցվումէ/, վարչական 1 սենյակ, 3 սանհանգույց, կաթսայատուն: Պարբերաբար աշխատանքներ են իրականացվում գույք ձեռք բերելու ուղղությամբ: Սանհանգույցները նորոգված են սակայն մեկն է հարմարեցված ԿԱՊԿՈՒ երեխաների համար և կարիք կա մնացածների նորոգման ու հարմարեցման: Վերջին տարիների դպրոցի խնայված ֆինանսական միջոցների հաշվից վերանորոգվել է սպորտդահլիճը, դասասենյակների հատակները մասնակի վերանորոգվել են,

տեղադրվել են եվրոպատուհաններ, դպրոցը գազաֆիկացվել է ,որի արդյունքում տեղադրվել է ջեռուցման կենտրոնացված համակարգ:Դպրոցը ունի ժամանակակից ճաշարան:Դպրոցում 2010 թվականին մեկնարկել է ՄԱԿ-ի ՊՀԾ կողմից կազմակերպված «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը, որը հնարավորություն է տալիս դպրոցի տարրական դասարանների աշակերտներին ապահովել առողջ, տաք սննդով: Իսկ 2023թ-ից սկսած անցել ենք պետական միջոցների հաշվին՝ «Դպրոցական սնունդ ազգային ծրագրին»: Ունի մշտական ջրամատակարարում:
Դպրոցին անմիջական հարևանությամբ գտնվում է գյուղի բուժկետը, որի աշխատողը երեխաներին մշտական հսկողության տակ է պահում:
Դպրոցում ըստ տիպային կառույցի կրթական ծրագրերի աստիճանը հիմնականէ (1-9 դասարաններ)՝ 5-օրյա աշխատանքային գրաֆիկով: Հաստատության շենքը տիպարային կառույց է՝ 70 աշակերտ նախագծային հզորությամբ և հարմարեցված կրթական ծրագրերի բակականցնող ուսումնական հաստատությունների պահանջներին համապատասխան:
Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված են դպրոցի շենքային պայմանները, դասասենյակները և դրանց նդհանուր վիճակը՝

**Աղյուսակ1.Ուսումնական հաստատության շենքային պայմանները**

| Դպրոցի շենքը և հարմարությունները | |
|---|---|
| Հարկայնությունը | 1 |
| Նախատեսված աշակերտական տեղերի քանակը | 70 |
| Տվյալ շենքում դպրոցի տեղակայման տարեթիվը | 2003 |
| Փաստացի հաճախող երեխաների թիվը | 29 |
| Շենքի ընդհանուր մակերեսը, $մ^2$ | 401 |

| Տարածքի անվանումը | Չափը՝ քառ.մ | Փաստացի վիճակը | Տարածքիանվանումը | Չափը՝ քառ.մ | Փաստացի վիճակը |
|---|---|---|---|---|---|
| Աշխատասենյակ | 17 | լավ | Դասասենյակ 4 | 14.8 | լավ |
| Ուսուցչանոց | 25 | լավ | Դասասենյակ 5 | 15.2 | լավ |
| Ճաշարան | 16.8 | գերազանց | Դասասենյակ 6 | 14.4 | լավ |
| Դահլիճ | 81.2 | լավ | Դասասենյակ 7 | 16.8 | լավ |
| Գրադարան | 16.4 | բավ | Մուտք | 2.1 | լավ |
| Պահեստ | 8.6 | գերազանց | Միջանցք | 126.2 | լավ |
| Համակարգչային սենյակ | 16.8 | լավ | Սանհանգույց 1 | 3 | լավ |
| Դասասենյակ 1 | 8 | լավ | Սանհանգույց 2 | 3 | լավ |
| Դասասենյակ 2 | 16.8 | լավ | Սանհանգույց 3 | 3 | լավ |
| Դասասենյակ 3 | 16.8 | լավ | Կաթսայատուն | 2.1 | լավ |

**Աղյուսակ 2. Նյութատեխնիկական բազան**

| Գույք, սարքավորումներ | Քանակը | Վիճակը | | Գույք, սարքավորումներ | Քանակը | Վիճակը |
|---|---|---|---|---|---|---|
| Գրատախտակ | 5 | բավ | | Շախմատի սեղան | 6 | լավ |
| Աշակերտական սեղան | 12 | բավ | | Տպիչ լազերային | 2 | լավ |
| Սեղան /մեծ/ | 1 | բավ. | | Բազմաֆունկց .տպիչ HP M1536 | 1 | լավ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Բազմոց/մեծ/ | 1 | բավ. | | Հոսանքի սնուցման սարք UPS | 3 | 2լավ,1բավ |
| Բազմոց/փոքր/ | 1 | բավ. | | Կալորիֆեր BALLU | 7 | լավ |
| բազկաթոռ | 2 | բավ. | | Գազօջախ NURGAZ 2 տեղ | 1 | բավ |
| Էլ.տաքացուցիչ/ռադիատոր/ | 5 | բավ | | Աթոռ ուսուցչի | 12 | լավ |
| շախմատ | 1 | բավ | | Պրոյեկտոր | 2 | գերազ. |
| Աթոռաշ. | 21 | բավ | | Դարակաշար 4 հարկ | 2 | գերազ. |
| գրասեղան | 2 | բավ | | Ջերմաչափ GP-200 | 1 | բավ |
| Թիկնաթոռ/փոքր/ | 1 | բավ | | ՎառարանASEL | 1 | բավ |
| Էլ.վառարան | 1 | բավ | | Գրատախտակ մարկերով | 1 | լավ |
| Հեռուստացույց | 1 | վատ | | Սալօջախ էլեկտ. 4 աչք ջեռոց | 1 | գերազ. |
| Տեսամագնիտոֆոն/ԴՎԴ/ | 1 | վատ | | Սեղան աշխատանքային | 1 | գերազ. |
| Երաժշտական կենտրոն | 1 | վատ | | Մոնիտոր Dell | 1 | գերազ. |
| Հեռուստացույցի տակդիր | 1 | լավ | | Բազմաֆունկց.սարք Canon | 1 | գերազ. |
| Համակարգիչ աշխատանքային | 1 | լավ | | Տեսախցիկ LOGITECH | 1 | գերազ. |
| Համակարգիչ ուսումնական | 3 | 1գերազ.,1լավ, 1 չաշխատող | | Եռոտանի Hama star64 | 1 | գերազ. |
| Պահարան | 1 | բավ | | Պրոյեկտորի էկրան | 1 | գերազ. |
| Թիկնաթոռ/մեծ/ | 1 | բավ | | Բարձրախոս Genius | 1 | գերազ. |
| Փոքրաթոռ | 5 | բավ | | Խոսափող համակարգչի | 1 | գերազ. |
| Մանկական սեղան | 6 | բավ | | G-16 տիպիզազի հաշվիչ | 1 | գերազ. |
| Մանկական աթոռ | 8 | բավ | | Սառնարան «Бирюса 135» | 1 | գերազ. |
| Ուսուցչի սեղան | 1 | բավ | | Էլեկտ.կշեռք | 1 | գերազ. |
| Պահարան մանկական | 2 | բավ | | Լվացարան 2թաս 1100*530*850 | 1 | գերազ. |
| Մանկականսեղան/անկյ./ | 2 | բավ | | Ջեռուցման համակարգ | 1 | գերազ. |
| Գրքերիպահարան | 6 | բավ | | Էլեկտ.սալիկ | 1 | բավ |
| Շախմատի սեղանի աթոռ | 10 | լավ | | գնդակ | 3 | բավ |
| Հոսանքի գեներատոր | 1 | գերազանց | | Աթոռ աշակերտական | 12 | գերազանց |
| Տոնածառ | 1 | գերազանց | | | | |

<u>Ստորև ներկայացվում է ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և սպառնալիքները</u>

| Հաստատության շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազա | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| Հաստատության շենքային պայմանները համապատասխանում են շահագործման անվտանգության առկա նորմատիվներին, ինչպես նաև ըստ կարգի պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը: | Լաբորատոր սենյակների, առարկայական կաբինետների բացակայություն |
| Դպրոցն ունի տարհանման ելք՝ֆորսմաժորային իրավիճակների համար նախատեսված | Դիտակտիկ նյութերի և լաբորատոր գույքի անհամապատասխանություն արդի պահանջներին/բացակայություն/ |
| Բակային հատվածը լուսավորված է | Բակային տարածքը բարեկարգված չէ |
| Ունի գրադարան,որը նպատակադրված է դարձնել թվային | Բուժկետի բացակայություն |
| Ունի ճաշարան,որն երեխաներին ապահովում է ամենօրյա տաք սննդով | Մարզական գույքի բացակայություն |
| Դպրոցն ապահոված է տեսահսկման համակարգով | Արդի գրադարանի բացակայություն |
| Դպրոցի տարածքը ցանկապատված է | Ապաստարանների բացակայություն |
| Դպրոցի ամբողջական հատակը գտնվում է մեկ հարթության վրա,որն ապահովում է անվասայլակների անարգել տեղաշարժ | Շախմատի դասասենյակի բացակայությունը |
| Մասնակի վերանորոգված դպրոց | Դասասենյակները և միջանցքն ունեն վերանորոգման կարիք |
| Ամբողջությամբ կտուրը կղմինդրից է | Պահակակետի բացակայություն |
| Դպրոցի մարզադահլիճը կարելիէ օգտագործել ցուցադրությունների, միջոցառումների համար | Դպրոց տանող ճանապարհը՝50մ ասֆալտապատված չէ |
| Առկաէ անհատական ջեռուցման համակարգ | Շենքում տաք ջրամատակարարումը բացակայումէ: |
| Սանհանգույցները վերանորոգված են, առանձնացված տղաների,աղջիկներին ուսուցիչների համար | Սպորտդահլիճի փոքր չափս՝81քառ․մ,չունի հանդերձարան |
| Դպրոցում առկա է էլեկտրոնային դասեր վարելու | ՆԶՊ առարկայական կաբինետի և |

| | |
|---|---|
| համար նախատեսված նյութատեխնիկական բազա | համակարգչային կաբինետի համատեղ օգտագործումը |
| Առկա է ինտերնետային հասանելիություն՝ Wi-Fi սարք, որը հասանելի է դպրոցի ողջ տարածքում | Դպրոցների միավորում |
| Դպրոցնունի 1200 քմ բակային տարածք | Բնական և տեխնածին աղետներ |
| Շենքային պայմանների համապատասխանություն ԿԱՊԿՈՒ երեխաների համար, դպրոցն ունի թեքահարթակ | Չունի հովանավոր |
| Պատուհանների մեծ մասը և գլխավոր մուտքը փոխարինված են եվրոպատուհաններով ու եվրոդռներով | Աշակերտական սեղանների մաշվածություն |
| Դպրոցն ունի շուրջօրյա ջրամատակարարում | |
| Կատարված է ներքին հարդարման աշխատանքներ | |
| Առկա է համակարգիչ ,պրոյեկտոր և պատճենահանող սարք համակարգչային դասարանի համար | |
| Դպրոցի հարևանությամբ առկա է ֆուտբոլի դաշտ | |
| Դպրոցի տարածքը հնարավորություն է տալիս բացօթյա դասեր և սպորտլանդիաներ կազմակերպելու համար: | |
| Ունի վերանորոգված մարզադահլիճ,որը նաև օգտագործվում է որպես հանդիսությունների դահլիճ | |
| Դպրոցի դիրքը աղետների և ռիսկերի կառավարման տեսակետից բարենպաստ է | |
| Դպրոցի հարևանությամբ առկա է ֆուտբոլի դաշտ | |
| Գյուղի բուժկետը գտնվում է դպրոցի անմիջական հարևանությամբ | |

Հիմնախնդիր – Դպրոցի նյութատեխնիկական բազայի անհամապատասխանություն ժամանակակից կրթական պահանջներին: Դպրոցի շենքային և տեխնիկական վիճակի գնահատումը՝ լավ: Լաբորատոր և առարակայական սենյակների անհրաժեշտություն: Տարածքի բարեկարգում, նյութատեխնիկական բազայի բարելավում և թարմացում, ձեռնարկատիրական գործունեության հիմնում՝ որպես ֆինասական վիճակի ապահովում:

Ստորև ներկայացնում ենք լուսանկարներ դպրոցի մինչև վերանորոգումը և վերանորոգումից հետո




















ԴՊՐՈՑԱԿԱՆ
ԿՅԱՆՔ
ԱՎԵԼԻ















2024-2025 թվականին նախատեսվում է թարմացնել դպրոցի կահավորումը,ձեռք բերել մարզագույք,վերանորոգել փտած հատակները։

| Դպրոցի շենքային պայմանները,նյութատեխնիկական բազան | | | |
|---|---|---|---|
| Նպատակների սահմանում | 1. Ուսումնական հաստատության շենքային պայմանների և կից տարածքի բարելավում,նորամուծությունների կիրառում:<br>2. Ուսումնական միջավայրի՝նյութատեխնիկական բազայով ապահովում,անվտանգ ուսումնական միջավայրի ստեղծում: | | |
| Խնդիրների սահմանում | 1. Դպրոցի դասասենյակների և միջանցքի նորոգում, դռների և պատուհանների փոխարինում : Դպրոցին կից տարածքի բարեկարգում, կանաչապատում:<br>Աշակերտների ազատ ժամանակի կառավարում՝ մինի բացօթյա մարզահրապարակի կառուցում:<br>2. Դասերը արդյունավետանցկացնելու համար անհրաժեշտ գույքի և սարքավորումների ձեռք բերում,դասարանների կահավորում, նոր դիդակտիկ նյութերի ձեռքբերում: | | |
| Գործողություն | Օգտագործել խնայված ֆինանսական միջոցները, համապատասխան միջոցառումների իրականացման միջոցով գտնել ֆինանսական ռեսուրսներ, ծրագիրը իրականացնելու նպատակով դիմել բարերարների, մասնակցել դրամաշնորհային ծրագրերի, կազմակերպելաճուրդ վաճառքներ, դիմել այլ ֆոնդերի | ժամանակացույց<br>2024-2029 | պատասխանատուներ<br>Կառավարման խորհուրդ,տնօրեն, վարչատնտեսական համակարգող, դասղեկներ |
| Ակնկալվող վերջնարդյունք | Ուսուցման որակի բարձրացում,ուսման նկատմամբ Հետաքրքրության առաջացում և նոր գաղափարների ձևավորման խթանում | | |
| Հնարավոր ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ | Ռիսկ-1.Ֆինանսական միջոցների բացակայություն<br>2. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու փորձի պակաս:<br>Ռիսկերը մեղմող գործողություններ-բյուջեիճիշտպլանավորում,<br>Լուծման ուղիների որոնում | | |
| անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաներ,մարդկային ռեսուրսներ | Նախագծեր,ծրագրեր,ֆինանսական միջոցներ:<br>Հիմնադիր,լիազորմարմին,վարչատնտեսական համակարգող,մանկավարժներ,աշակերտներ,ծնողներ, հովանավորներ,բարերարներ,համայնք | | |
| վերահսկողության մեխանիզմները | Զարգացման ծրագրի կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների եռամսյակային և տարեկան կազմում՝ըստ ծրագրային պահանջներին համապատասխան | | |
| Ֆինանսական աղբյուրներ | Պետական ծրագրեր,միջազգային ծրագրեր, դրամաշնորհներ,դպրոցի խնայված միջոցներ | | |

## 1.3 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի կառավարումն իրականացնում են տնօրենը, միացյալ կառավարման խորհուրդը՝ Միխայելովկայի միջնակարգ դպրոցի հետ համատեղ: Կառավարման խորհուրդը գործում է իր լիազորությունների սահմանում՝իրականացնելով դպրոցի կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները: Տնօրենըզբաղվում է դպրոցում իրականացվող գործընթացների ընթացիկ կառավարմանն կազմակերպչականհարցերով: Վերջինս սերտ համագործակցության մեջ է կառավարման խորհրդի հետ,ինչը առավել արդյունավետ է դարձնում հաստատության կառավարման գործընթացը:Բացի այդ որպես խորհրդակցական մարմիններ,դպրոցումառկաէ նաև՝

- Մանկավարժական խորհուրդ (ընդգրկված են բոլոր մանկավարժական աշխատողները),
- Ծնողական խորհուրդ (ընդգրկված են դպրոցի 1-9 դասարանների ծնողական խորհուրդների նախագահները,
- Աշակերտական խորհուրդ(ընդգրկված են 5-9-րդդասարանների սովորողներ),:

Դպրոցում ուսումնական գործընթացն իրականացվում է դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների ,մանկավարժների,սովորողների և ծնողների փոխադարձ վստահության պայմաններում:Որոշումները կայացվում են համագործակցության արդյունքում,խնդիրների քննարկման ժամանակ ապահովվում է բոլոր կողմերի մասնակցությունն ու նրանց դիրքորոշումների ներկայացումը: Կառավարման խորհրդի կողմից պարբերաբար իրականացվում են վերահսկողական աշխատանքներ, որոնք միտված են վերհանելու կատարված աշխատանքներում բացթողումները և դրանց արագ լուծմանը:Որպես վերահսկողական գործիք կիրառվում է տնօրենի կողմից եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացումը:

Ստորև ներկայացնում ենք <<ՀՀ Լոռու մարզի Պետրովկայի հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի և <ՀՀ Լոռու մարզի Միխայելովկայի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի միացյալ խորհրդի անվանական կազմը.

| | Անուն,Ազգանուն | Առաջադրող |
|---|---|---|
| 1. | Ավետիսյան Կարեն | Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, Մշակույթի և սպորտի նախարար |
| 2. | Մկրտչյան Արման | |
| 3. | Բասենցյան Սեդա | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի կողմից առաջադրված |
| 4. | Մաղաքյան Մարտին | |
| 5. | Անժելա Մուկուչյան | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի կողմից առաջադրված՝ Հայաստանի ՀանրապետությանՄարչապետ համայնքի ղեկավարի ներկայացմամբ |
| 6. | Զարուհի Հովհաննիսյան | Հայաստանի Հանրապետության Լոռւ մարզի <<Պետրովկայի հիմնական դպրոց>>պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված |
| 7. | Մանուշակ Սուքիասյան | |
| 8. | Շիրազ Աղայան | Հայաստանի Հանրապետության Լոռւ մարզի <<Պետրովկայի հիմնական դպրոց>>պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված, |
| 9. | Ալինա Ալեքսանյան | |
| 10. | Սուքիասյան Մելինե | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի կողմից առաջադրված՝ Հայաստանի Հանրապետության Մեծավան համայնքի ղեկավարի ներկայացմամբ |
| 11. | Մնացականյան Նունե | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի <<Միխայելովկայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված |
| 12. | Ամիրջանյան Ինգա | |
| 13. | Բարոյան Նարինե | ՀայաստանիՀանրապետության Լոռու մարզի <<Միխայելովկայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի կողմից առաջադրված, |
| 14. | Չիլինգարյան Մարինե | |

Ստորև ներկայացվում է ուժեղ և թույլ կողմերը.

| Հաստատության կառավարման եվ խորհրդակցական մարմիններ | |
|---|---|
| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
| Դպրոցի **կառավարման խորհուրդը** աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տալիս եզրակացություն | Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ,շրջանավարտների խորհուրդ |
| Դպրոցի կառավարման խորհուրդը հաստատում է դպրոցի կազմակերպական կառուցվածքը,ներքինկարգապահական,այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները | Պասիվություն տարբեր սեմինարներին |
| Դպրոցիկառավարմանխորհուրդը Շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում, պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին | խորհրդի անդամների վերապատրաստման պակաս |
| Դպրոցում պարբերաբար անցկացվում են կառավարման խորհրդի հերթական և արտահերթ նիստեր տնօրենի մասնակցությամբ /խորհրդակցական ձայնի իրավունքով/: | |
| Կառավարման խորհրդի անդամներից յոթը ունեն բարձրագույն կրթություն Որոշումները կայացվում են տնօրենի և կառավարման խորհրդի համագործակցության արդյունքում,ապահովելով բոլոր կողմերի մասնակցությունը | |
| Տնօրենը համագործակցում է տարածքային կառավարման մարմինների և այլ կառույցների ու անհատների հետ,տեղական ինքնակառավարման մարմինների հետ | |
| **Ծնողական խորհրդի** կազմում դպրոցի բոլոր դասարանների ծնողական խորհուրդների նախագահներն են: Տեղյակ են դպրոցի | Իրազեկված չեն կանոնադրությամբ իրենց վերապահված բոլոր գործառույթներին |

| | |
|---|---|
| ուսումնադաստիարակչական աշխատանքներին, ակտիվ են տարաբնույթ միջոցառումներ և էքսկուրսիաներ կազմակերպելիս: | |
| Դպրոցի ծնողական խորհուրդը սերտ համագործակցում է ինչպես դպրոցի տնօրենության,այնպես էլ մանկավարժական և աշակերտական խորհուրդների հետ: | |
| Ծնողական խորհուրդը կազմակերպում է էքսկուրսիաներ, ճանաչողական այցելություններ դեպի թանգարաններ,Մշակութային այլ հաստատություններ | |
| Մանկավարժական խորհրդի կազմում դպրոցի բոլոր մանկավարժներն են , ծնողխորհրդի նախագահը: Այն ձևավորվածէ 11 անդամից: Փորձառու և որակյալ մասնագետներ կան:Մեծ մասը զբաղվում են ինքնակրթությամբ, պարբերաբար մասնակցում վերապատրաստումների և խորհրդակցությունների: | Ուսուցիչները պասիվություն են ցուցաբերում մրցույթների նկատմամբ. Քիչ թվով ուսուցիչներ են մասնակցում կամավոր ատեստավորման ու տարակարգի բարձրացմանը: |
| Դպրոցը համալրված է ժամանակակից դասավանդման հմտություններ ունեցող, առարկայական և մեթոդական հմտություններով օժտված ուսուցիչներով: | |
| Լաբորատոր փորձեր իրականացվում են վիրտուալ եղանակով | Լաբորատոր փորձեր չեն Իրականացվում լաբորատորիայի բացակայության պատճառով |
| Մանկավարժներն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն, Երեք մանկավարժներ ունեն միջին Մասնագիտական կրթություն՝մասնակցել են կամավոր ատեստացիային | Պասիվ մասնակցություն առարկայական օլիմպիադաներին |
| Դպրոցն օժանդակում է կադրերի առաջխաղացմանը՝ | Տարակարգ ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների թվի բացակայություն |
| Դպրոցի մանկավարժները ակտիվորեն մասնակցում են ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպվող և անցկացվող սեմինարներին և վերապատրաստումներին,տիրապետում են ՀՊՉ-ի պահանջներին | Էլեկտրոնային ինտերակտիվ մեթոդների կիրառության պակաս |
| **Մեթոդմիավորումներ** դպրոցում գործում է առարկայական երեք մեթոդմիավորում՝<br>• հումանիտար<br>• բնագիտական | Պասիվ են առարկայական մրցույթներ, միջոցառումներ կազմակերպելու գործում: |

| | |
|---|---|
| • տարրական դասարանների | |
| Սովորողների մեծ մասը տիրապետում են ՏՀՏ գործիքներին,ապահովված են դասագրքերով: | Բնագիտական առարկաների նկատմամբ պասիվություն |
| Մեթոդմիավորումներն ապահովում են առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան ուսումնական ծրագրերի կատարում: | |
| Դասաբաշխումներն իրականացվում են կրթության որակի բարելավման սկզբունքներից ելնելով,դրանց կազմման սկզբունքները թափանցիկ են և ընկալելի բոլոր մասնակիցների համար: | |
| Պարբերաբար գումարվում են նիստեր,կատարվում են դասալսումներ: | |
| **Աշակերտականխորհուրդը** հիմնականում իրականացնում է իր գործառույթները, գիտակցում և գնահատում է ինքնակառավարման կարևորությունը: | Չկան սովորողների հետաքրքրություններով պայմանավորված, ձևավորված ակումբներ, խմբակներ: |
| Աշակերտական խորհուրդը ակտիվ մասնակցում է դպրոցի գործունեությանը ,հանդես է գալիս մի շարք առաջարկություններով,նախաձեռնում և կազմակերպում միջոցառումներ,նպաստում ներքին կարգապահական կանոնների պահպանմանը | Պասիվ են առարկայական մրցույթներ, միջոցառումներ կազմակերպելու գործում: |
| Աշակերտական խորհուրդը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին՝ աշակերտներին վերաբերող ուսումնական հարցերի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, աշակերտների կարգապահական հարցերի քննարկումներին: | |
| Աշակերտական խորհուրդը ունի արձանագրությունների մատյան,որտեղ գրանցվում են բոլոր նիստերը: | |
| | |




Աշակերտական խորհուրդը սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացչության մարմին է,որի գործունեության հիմնական սկզբունքներն են՝կամավորությունը,սովորողների իրավահավասարությունը, կառավարման կոլեգիալությունը և հրապարակայնությունը:Աշակերտական խորհուրդը ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան հաստատության գործունեության կազմակերպմանը նպաստելու,անմիջականորեն իրենց վերաբերվող հարցերի մասին սովորողների կարծիքի ազատ արտահայտումն ապահովելու և սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ հաստատության կանոնադրության դրույթների պահպանումը վերահսկելու նպատակով:Աշակերտականխորհուրդըդպրոցումքաղաքացիականկրթությանկարևորագույ նտարրնէ: Այն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում դպրոցում կազմակերպվող միջոցառումներին,նաև օգնում է տնօրենությանը դպրոցի շրջակայքի բարեկարգման,կանաչապատման աշխատանքներում,շաբաթօրյակների անցկացման ժամանակ : Աշակերտական խորհուրդը խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում է կառավարման և մանկավարժական խորհրդների նիստերին: Աշակերտական խորհուրդնունիարձանագրություններիմատյան,որտեղ գրանցվում են բոլոր նիստերը:

Ստորև ներկայացնում ենք սովորողների մասին տեղեկատվություն



## ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կադրերն ու նրանց նկատմամբ վարվող քաղաքականությունը յուրաքանչյուր գործընթացում առանցքային դերակատարություն ունեն:Մենք նույնպես գիտակցում ենք դպրոցի անձնակազմի կառավարման գործընթացների արդյունավետության կարևորությունը, իսկ այդ արդյունավետությունն անմիջականորեն բխում է նաև դպրոցի տնօրենի վարած կադրային քաղաքականությունից:Իհարկե անհրաժեշտ է հստակ գիտակցել,որ անձնակազմի կառավարման գործընթացների արդյունավետությունը չի կարող պայմանավորվել բացառապես դպրոցի տնօրենի վարած քաղաքականությամբ. հատկապես դպրոցի տնօրենի, ուսուցիչների և վարչական այլ աշխատողների վարձատրության չափերի և խրախուսման հստակ մեխանիզմների բացակայության առումով, առկա են համընդհանուր խնդիրներ, որոնք թերևս հնարավոր է կարգավորել միայն հանրակրթության ոլորտում ընդհանուր սկզբունքներ սահմանելու և դրանք օրենսդրորեն ամրագրելու միջոցով: Այնուհանդերձ՝առկա մեխանիզմների շրջանակներում դպրոցի տնօրենի կողմից անհրաժեշտ է հետևողական քայլեր ձեռնարկել անձնակազմի կառավարման գործընթացներն առավել բարելավելու ուղղությամբ,ինչը ենթադրում է հետևյալ ուղղություններով միջոցառումների իրականացում՝

1. Կադրերի համալրում՝ելնելով անձնակազմի երիտասարդացման օբյեկտիվ անհրաժեշտությունից,
2. Մանկավարժական անձնակազմի պարբերական վերապատրաստում,
3. Սահմանված կարգով մանկավարժական անձնակազմի ատեստավորում,
4. Մանկավարժների աշխատանքի որակի գնահատման ուսումնասիրությունների իրականացում՝ տարեկան կտրվածքով,
5. Անձնակազմի գործունեության խրախուսում (պաշտոնական աճ,տարատեսակ պարգևատրումներ,մասնագիտական վերապատրաստումներ,տարակարգի ստացում,մասնագիտական և կազմակերպական խրախուսում, այդ թվում՝«Դպրոցի լավագույն ուսուցիչ»,«Դպրոցի լավագույն դասղեկ» և այլ անվանակարգերի սահմանում):
6. Համապատասխան ռեսուրսների առկայության դեպքում փորձի փոխանակման և վերապատրաստման միջոցառումների իրականացում ոլորտի լավագույն մասնագետների հետ

Թվարկված բոլոր միջոցառումներն էլ շատ կարևոր են,փոխկապակցված և միմյանց լրացնող,և որևէ ուղղությամբ միջոցառումների բացակայությունը կարող է հարվածել անձնակազմի կառավարման բնագավառում կատարված մնացած միջոցառումների արդյունավետությանը:

| Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմիններ | | | |
|---|---|---|---|
| Նպատակների սահմանում | Տնօրենի և կառավարման,խորհրդակցական մարմինների կողմից իրականացվող գործառույթների կանոնակարգում և հստակեցում,դերի բարձրացում,որակական բարելավում | | |
| խնդիրների սահմանում | - Խորհրդակցական մարմինների դերի կարևորում:<br>-Համագործակցային ծրագրերի իրականացում:<br>-Դպրոց-ծնող կապի ուժեղացում<br>-Մանկավարժական համակազմի որակական բարելավում<br>- Դասապրոցեսներիկառավարման արդյունավետության բարձրացում՝կրթական գործընթացների զարգացում:<br>- Աշակերտական խորհրդ դերի բարձրացում, նոր ծրագրերի և Նախաձեռնությունների խրախուսում:<br>- Կառավարման մարմնի և խորհրդակցական մարմինների միջև սերտ կապերի պահպանում: | | |
| գործողություն | | ժամանակացույց | պատասխանատուներ |
| | - Դպրոցի **կառավարման խորհրդի** գործառույթի մասնակցայնության ավելացում և ընդլայնում:<br>-Խորհրդակցական մարմինների հետ սերտ կապերի ձևավորում:<br>-Նյութատեխնիկական բազայի բարելավման ուղղությամբ որոշումների ընդունում:<br>- Խորհրդի անդամների մասնակցությունը դպրոցի կրթա դաստիարակչական ծրագրերին,միջոցառումներին, սեմինարներին | 2024-2029<br>2024-2029<br>2024-2029<br>2024-2029 | Տնօրենություն,կառավարման խորհուրդ,խորհրդակցական մարմիններ |

| | | | |
|---|---|---|---|
| | **-Ծնողական խորհրդին** ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում.<br>-Հրավիրել պարբերաբար ծնողական ժողովներ:<br>-Կազմակերպել սեմինարներ և հանդիպումներ ներառական կրթությունը ծնողներին իրազեկելու նպատակով:<br>-Ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների մասնակցություն | 2024-2029 | Տնօրենություն, դասղեկներ,ծնողներ |
| | **Աշակերտական խորհրդի** դերի բարձրացում՝<br>-Աշակերտների համար էքսկուրսիաների,պատմամշակութայի ն վայրեր այցելությունների կազմակերպում:-Կազմակերպե լ միջոցառումներ, հանդիպումներ, բանավեճեր:<br>- Ամրապնդել ուսուցիչ-աշակերտ, ծնող-աշակերտ,համայնք-աշակերտ հարաբերությունները: | 2024-2029 | Տնօրենություն, դասղեկներ |
| | **Մանկավարժական խորհրդի** դերի բարձրացում<br>-Ուսուցիչների աշխատանքների գնահատման , խրախուսման և քաջալերման գործիքների կիրառում:<br>-Մանկավարժական անձնակազմի վերապատրաստումների իրականացում,ուսուցիչների մասնակցության խթանում սեմինարներին:<br>-Ուսուցիչներին ծանոթացնել նոր ՀՊԳ-ին և փոփոխություններին:<br>-Կազմակերպել դասընթացներ համակարգչային գիտելիքները բարելավելու նպատակով:<br>-ՏՀՏ գործիքների և էլեկտրոնային ռեսուրսների ձեռքբերում :<br>-Մանկավարժներին դասալսումների հիման վրա մասնագիտական և մեթոդական աջակցության ցուցաբերում | 2024-2029<br>2024-2025 ուս․տարի | Տնօրենություն,ԴԱԿ, Մանկավարժական խորհուրդ |

| | | | |
|---|---|---|---|
| | **Հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդների** ձևավորում<br>-Խորհուրդների կազմում ընդգրկել դպրոցի զարգացման համար շահագրգռված անձանց՝ներգրավելով նյութատեխնիկական բազայի և ֆինանսական միջոցների համալրմանը | 2024-2029 | Տնօրենություն, կառավարման խորհուրդ |
| Ակնկալվող վերջնարդյունք | -Կառավարման խորհրդի և տնօրենի ակտիվ համագործակցություն<br>- Դպրոցի հոգսերով մտահոգված և աջակցող ծնողական համայնքի ձևավորում<br>- Մանկավարժների դասավանդման և մասնագիտական որակների բարելավում<br>-Աշակերտների ուսման նկատմամբ հետաքրքրությունների բարձրացում և ուսուցման որակի բարելավում | | |
| հնարավորռիսկեր ռիսկերը մեղմող գործողություններ | Ռիսկ-1. Լրիվի մոտ մոտիվացիայի պակաս<br>2.Կառավարման խորհրդի որոշ անդամների անտարբերությունը կամ պասիվությունը<br>3. Աշակերտների՝միջոցառումներին ներգրվածության պակաս<br>4. Ուսուցիչների պասիվությունը,անվստահությունը նորարական մեթոդների նկատմամբ<br>Ռիսկերը մեղմող գործողություն-սեմինարների, դասալսումների,մանկավարժահոգեբանական ,մեթոդական զեկուցումների միջոցով ամրապնդել, խորհրդակցական մարմինների և դպրոցի սերտ կապը,կատարել ճիշտ դպրոցավարություն | | |
| անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաներ, մարդկային ռեսուրսներ | Կառավարման հմտությունների բարելավման բազմաթիվ ռեսուրսներ, Կառավարման խորհուրդ,տնօրեն,դպրոցի խնդիրներով մտահոգված սրտացավ մարդիկ, խորհրդակցական մարմինների նիստերի արձանագրություններ | | |
| վերահսկողության մեխանիզմները | Զարգացման ծրագրի ամենամյա կատարողականի հաշվետվության ձևեր,ամենամյա հաշվետվություններ և համապատասխան արձանագրություններ | | |
| Ֆինանսական աղբյուրներ | Պետական բյուջե,սեփական միջոցներ | | |

## 1.4 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Ուսումնական հաստատությունը բոլոր հնարավոր և անհնարին տարբերակներով փորձում է կապը պահել բոլոր շահագրգիռ կողմերի հետ,մասնավորապես Տաշիր համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների,համայնքի և համայնքից դուրս գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության հետ, որոնք մեծ ներդրում և ազդեցություն ունեն դպրոցի հասարակական կյանքի ակտիվությանգործում: Ցավոք համայնքում այնքան էլ մեծ թիվ չեն կազմում հասարակական կազմակերպությունները, ուստի և այս մասով առկա են որոշ բացեր, և երեխաները տարբեր կամավորական աշխատանքներում, հետաքրքիր միջոցառումներում մասնակցություն ցուցաբերել չեն կարողանում:

Դպրոցը նաև սերտորեն համագործակցում է կրթական ոլորտի տարբեր կառույցների հետ, որոնք իրենց դրական ազդեցությունն են թողնում կրթական կարողությունների զարգացման և առաջընթացի վրա:

Հարկ է նշել, որ ծնողական համայնք-դպրոց համագործակցությունը ևս կարևոր ուղղություն է,քանի որ ծնողները որպես շահագրգիռ կողմեր,անմիջական ազդեցություն են թողնում դպրոցի ուսումնական միջավայրի վրա,իրենց ներուժի սահմաններում ներդրում են ապահովում դպրոցում առաջացած բազմաթիվ խնդիրների լուծման գործում:Սակայն ոչ բոլորն են ցուցաբերում ակտիվ մասնակցություն դպրոցի զարգացմանն ուղղված գործընթացներում,ինչի համար պարբերաբար դպրոցում կազմակերպվում են սեմինարներ,քննարկումներ՝ ծնողների մասնակցության դերի կարևորության ընկալման վերաբերյալ:

| Համագործակցություն | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| Դպրոցը շատ ակտիվ համագործակցում է թատրոնների, թանգարանների և այլ մշակութային կենտրոնների հետ, կազմակերպվում են այցելություններ մշակույթի օջախներ և տեսարժան վայրեր | Չունենք համագործակցություն այլ կրթական կառույցների, հարևան դպրոցների հետ |
| Դպրոց-համայնք համագործակցային ամուր կապերի առկայություն: | Քույր դպրոցի բացակայություն |

| | |
|---|---|
| Դպրոցը համագործակցում է ՀՀ կառավարության, Լոռու մարզպետարանի,Տաշիրի համայնքապետարանի ԿԳՄՍ-ի,ԿՏԱԿ-ի,ԿԶՆԱԿ-ի,ԳԹԿ-ի,ԱԻՆ-ի,ՏՄԱԿ-ի,իրավապահ մարմինների հետ: | Բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցության բացակայություն: |
| Ապահովված է ծնողների մասնակցությունը կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում՝ ամրապնդելով ծնող-դպրոց,ծնող-ուսուցիչ-աշակերտ կապը: | Ծնողական համայնքի ոչ լիարժեք ներգրավվածությունը դպրոցի հիմնախնդիրներին |
| Դպրոցի հեղինակությունը հանրային շրջանակում | |
| Մասնակցություն Տաշիրի մշակույթի տան երգ ու պարի և շախմատի խմբակներին:Մասնակցություն շախմատի և այլ առարկաների օլիմպիադաներին: | |
| Համագործակցություն այլ ուսումնական հաստատությունների /դպրոց,քոլեջ,ԲՈՒՀ/ հետ | |
| Այցելություններ մշակույթի օջախներ և տեսարժան վայրեր | |
| Մասնակցություն ՄԱԿ-ի ՊՀԾ կողմից կազմակերպված «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրին | |
| Համագործակցում է մենթոր դպրոցների հետ հեռավար ուսուցում կազմակերպելու համար | |
| Համագործակցում է <<Հարմոնիա>>հիմնադրամի հետ | |

| Համագործակցությունը համայնքի,կրթության կառավարման մարմինների եվ շահառու Կազմակերպությունների հետ | | | |
|---|---|---|---|
| Նպատակների սահմանում | Համայնքի հետ սերտ կապերի ընդլայնում և համատեղ աշխատանքների իրականացում | | |
| խնդիրների սահմանում | Դպրոց-համայնք կապը օգտագործել ի օգուտ երեխաների կրթա-դաստիարակչական աշխատանքների բարելավման | | |
| գործողություն | | ժամանակացույց | պատասխանատուներ |
| | Դպրոցին մասնակից դարձնել համայնքի մաքրության, մշակութային, սպորտային,հանրապետական, մարզային և համայնքայիննշանակության միջոցառումներին | 2024-2029 | Տնօրեն, դասղեկներ, ԴԱԿ,համայնքի ներկայացուցիչներ |
| | Կազմակերպել հանդիպումներիամայնքի տարբեր սոցիոլոգիական խմբերի, հասարակական կազմակերպություններիհետ | 2024-2029 | Տնօրեն,համայնքի ներկայացուցիչներ,ՀԿ-ներ |
| | Մասնակցել համայնքի տարածքում իրականացվող ծառատունկին | 2024-2029 | Դպրոցի անձնակազմ,սովորողներ,համայնքի ներկայացուցիչներ |
| | | | |
| | Կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաների | 2024-2029 | Տնօրեն,համայնքի ներկայացուցիչներ,ծնողներ |
| | Կազմակերպել համատեղ միջոցառումներ | 2024-2029 | Տնօրեն,համայնքի ներկայացուցիչներ,ԴԱԿ |
| Ակնկալվող վերջնարդյունք | Համայնքին և նաև բոլոր շահագրգիռ կողմերին մասնակից դարձնել դպրոցի զարգացման գործընթացին | | |

| | |
|---|---|
| Հնարավոր ռիսկեր ռիսկերը մեղմող գործողություններ | Ռիսկ-1.Մոտիվացիայի պակաս<br>2. Համայնքի կարիքների և կրթական գործընթացի անհամատեղելիություն:<br>Ռիսկերը մեղմող գործողություն-<br>1.Իրականացնել տեղեկատվական հանդիպումներ համայնքի, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ:Կազմակերպել խորհրդատվություններ,անհատական հանդիպումներ:<br>2. Անել համայնքի կարիքների բազմակողմանի վերլուծություն և համապատասխանեցնել կրթական գործընթացներին |
| անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաներ, մարդկային ռեսուրսներ | Ակտիվ նախաձեռնություններ,մանկավարժահոգեբանական գրականություն<br>Տնօրեն,համայնքի ներկայացուցիչներ |
| վերահսկողության մեխանիզմները | Զարգացման ծրագրին համապատասխան կիսամյակային և տարեկան հաշվետվություններ , հաշվետվությունների հասանելիություն բոլոր շահառու մարմիններին/պետական լիազոր մարմիններ,դպրոցի աշխատակազմ,ծնողներ,աշակերտներ,համայնք և այլն/ |
| Ֆինանսական աղբյուրներ | Սեփական միջոցներ,համայնքային բյուջե |
| Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ | |
| Նպատակների սահմանում | Նախագծային և հետազոտական աշխատանքների իրականացում ըստ համայնքի կարիքի |
| խնդիրների սահմանում | • Սովորողների անմիջական մասնակցություն և ներգրավվում համայնքի խնդիրներին |

| | | | |
|---|---|---|---|
| Գործողություն | | ժամանակացույց | պատասխանատուներ |
| | Իրականացնել համայնքի կարիքների ուսումնասիրություն և վերլուծություն | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, կառավարման խորհուրդ |
| | Հաշվի առնել համայնքի կարիքներն ու ներուժը նախագծային աշխատանքների թեմաների ընտրության ժամանակ | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, կառավարման խորհուրդ |
| | Խթանել համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ: | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, կառավարման խորհուրդ, ՏԻՄ |
| Ակնկալվող վերջնարդյունք | • Դպրոցի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորում<br>• Սովորողների՝ իրենց նախասիրություններին համապատասխան կարողությունների զարգացում | | |
| Հնարավոր ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ | Ռիսկ-նախասիրության պակաս,արտաքին միջամտություններ<br>Ռիսկերը մեղմող գործողություն-<br>Տեղեկությունների փոխանակում,հետազոտություն | | |
| անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաներ, մարդկային ռեսուրսներ | Հանդիպումներ,հարցազրույցներ:<br>Աշխատանքային գործիքներ,այլ պարագաներ:<br>Տնօրեն,ուսուցիչ,տեղական ինքնակառավարման մարմին,աշակերտ,համայնք: | | |
| վերահսկողության մեխանիզմները | Զարգացման ծրագրի համապատասխան ամենամյա հաշվետվություն<br>Յուրաքանչյուր կիսամյակի վերջում | | |
| Ֆինանսական աղբյուրներ | Այլ միջոցներ | | |

## 1.5 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Դպրոցում մանկավարժական աշխատակցիների թիվը 10 է, որի մեջ ներառված են վարչակառավարչական անձնակազմը և այլ հաստիքացուցակով գրանցված աշխատակիցները:Մանկավարժների հաստիքացուցակը ներկայացված է աղյուսակում.

| Առարկան | Հաստիքիքանակը | Նշումներ |
|---|---|---|
| Դասվար | 2 | |
| Մաթեմատիկա,ֆիզիկա | 1 | |
| Հայոցլեզու | 1 | |
| Ռուսացլեզու,անգլերեն | 1 | |
| Քիմիա ,Կենսաբանություն, Տեխնոլոգիա | 1 | |
| Աշխարհագրություն,ֆիզկուլտուրա,երաժշտություն | 1 | |
| ՆԶՊ | 0.5 | հեռավար |
| Ինֆորմատիկա | 1 | |
| Հոգեբան | 0,5 | թափուր |
| Ուսուցչի օգնական | 0,5 | թափուր |
| Պատմություն,ՀԵՊ | 1 | |
| Գրադարանավար | 0,75 | թափուր/երեխայի խնամքի արձակուրդ/ |

2020-2024 թթ.պարտադիր ատեստավորում անցել են 8 ուսուցիչ տարակարգ ունեցող ուսուցիչ չունենք,իսկ 2023 թ-ին կամավոր ատեստացիային մասնակցել են երեք ուսուցիչ:

### Դասավանդող ուսուցիչների տարիքային կազմը ըստ տարիների

| Ուսուցիչների տարիքային կազմը | 2020-2021 ուս.տարի | 2021-2022 ուս.տարի | 2022-2023 ուս.տարի | 2023-2024 ուս.տարի |
|---|---|---|---|---|
| մինչև 30 տարեկան | 2 | 2 | 1 | 0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 31-40 տարեկան | 3 | 3 | 2 | 2 |
| 41-50 տարեկան | 4 | 4 | 3 | 3 |
| 51-55 տարեկան | 1 | 1 | 3 | 3 |
| 56 տարեկան և ավելի | 0 | 0 | 0 | 1 |

Ուսումնական տարվա ընթացքում խորհուրդը սահմանված կարգով առնվազն երկու ամսվա կտրվածքով անց է կացնում նիստեր, անհրաժեշտության դեպքում նաև արտահերթ: Մանկավարժական խորհրդի առաջին նիստում հաստատվում է խորհրդի նիստերի օրակարգը ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը, դպրոցական բաղադրիչի ժամերի բաշխումը:

Դպրոցի ուսուցչական համակազմը համալրվում է ուսուցչի թափուր տեղի համար հայտարարվող մրցույթով՝ ըստ լիազոր մարմնի կողմից սահմանված կարգի:

Յուրաքանչյուր տարի դպրոցի մանկավարժների 20%-ը մասնակցում են պարտադիր ատեստավորման վերապատրաստման դասընթացներին առկա և առցանց ձևաչափով: Ուսումնասիրել են նոր չափորոշչի պահանջները վերապատրաստումների միջոցով:

<u>Ստորև ներկայացվում է ուժեղ և թույլ կողմերը</u>.

| ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| Ամեն տարի դպրոցի մանկավարժական անձնակազմի 20 տոկոսը պարտադիր ատեստավորվում է, մասնակցում են մասնագիտական սեմինարների: | |
| Դպրոցում անցկացվում են բարձր որակի ռազմահայրենասիրական միջոցառումներ և դասեր | |
| Ուսումնադաստիարակչական աշխատանքների,դասղեկների,մասնախմբերի պլանների առկայություն և հաշվետվությունների ներկայացում սահմանված կարգով | |
| Անձնակազմի բոլոր անդամները մասնակցել են «ԿԶՆԱԿ» հիմնադրամի կողմից կազմակերպված ՀՊՉ-ի վերապատրաստման դասընթացներին: | Կամավոր ատեստավորմանը,տարակարգի բարձրացմանը մասնակցելու պասիվություն |
| Կազմակերպվում են փոխադարձ դասալսումներ և փորձի փոխանակում դպրոցի ու այլ դպրոցների մանկավարժների հետ,դրանց արդյունքները քննարկվում են մանկավարժական | |

| | |
|---|---|
| խորհրդի և մեթոդմիավորման նիստերի ժամանակ՝ցուցաբերվելով անհրաժեշտ մեթոդական և մասնագիտական օգնություն: | |
| Խրախուսվում են ուսումնական տարվա ընթացքում լավ առաջընթաց դրսևորած մանկավարժները | |
| Մանկավարժական անձնակազմի մեծ մասը տիրապետում է աշակերտակենտրոն,ինտերակտիվ,մասնակցային մեթոդներին և կիրառում դասավանդման ընթացքում | Նախաձեռնողականության ,ինքնուրույնության պակաս |
| Մանկավարժները տիրապետում են MS Teams հեռավար հարթակին,օգտվում են կրթական ռեսուրսներից: | Ուսուցչական համակազմում, հատկապես միջին տարիքից բարձր, նկատվում է համակարգչային հմտությունների պակաս |
| Պարտադիր գործածության բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝էլեկտրոնային,լրացվում են սահմանված կարգին  համապատասխան և ժամանակին: | |
| 9 մանկավարժներից 6-ը ունեն բարձրագույն մանկավարժական կրթություն | Մանկավարժներից երեքը ունեն մ/մ կրթություն,սակայն ունեն քսան տարուց ավելի մասնագիտական ստաժ |

Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչների թիվը




Ուսուցիչները և աշակերտները մեկ միասնական համակարգ են, և նրանց գործունեությունը փոխկապակցված է: Մենք պետք է կարողանանք գնահատել մեր մանկավարժական պոտենցիալը, ինչի համար պետք է ունենանք գնահատման չափանիշներ: Մենք կարող ենք ուսուցչին գնահատել՝ ըստ նրա կրթության և փորձառության, ըստ նրա՝ ուսուցման գործընթացում ունեցած հաջողությունների, ըստ դպրոցի զարգացման գործընթացում նրա ունեցած ներդրման: Չափանիշներ կարող են լինել օրինակ՝

- Ունի բարձրագույն մասնագիտական կրթություն:
- Ունի աշխատանքի 5 և ավելի տարվա փորձ:
- Ուսուցման գործընթացում կիրառում է դասավանդման այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնք աշակերտներին հնարավորություն են տալիս ստանալու բավարար գիտելիքներ, ձեռք բերելու անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:
- Գիտի գնահատման մեթոդաբանությունը և կարողանում է այն կիրառել:
- Գիտի առարկայի չափորոշիչները և դասավանդելիս առաջնորդվում է չափորոշիչներով:
- Իր աշխատանքում պատասխանատու է և պարտաճանաչ, նպաստում է դպրոցի ուսումնական և վարչական աշխատանքների կազմակերպմանը, ուսումնասիրում է գոյություն ունեցող փորձը և տարածում է իրենը:
- Գիտի տարիքային հոգեբանությունը:
- Գիտի և հարգում է երեխաների իրավունքները:
- Պահպանում է մանկավարժական էթիկայի կանոնները:

Կրթության որակի բարելավումը նախ և առաջ ենթադրում է որակյալ ուսուցիչների առկայություն: Կրթության որակի բարձացման և բարեփոխումների հաջողության ապահովման առանցքային դերը պատկանում է ուսուցչին:

| Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը | | | |
|---|---|---|---|
| Նպատակների սահմանում | • Դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական որակավորման կատարելագործում, ուսուցման որակի բարելավում<br>• Ժամանակակից ՏՀՏ–երին մանկավարժների տիրապետման մակարդակի բարելավում, | | |
| խնդիրների սահմանում | • Ուսուցիչների պատրաստվածության և ինքնագնահատականի բարձրացում,մասնագիտական առաջխաղացման հնարավորությունների ընդլայնում:<br>• Ուսուցիչների դասավանդման ժամանակակից մեթոդներին տիրապետում և կիրառում դասապրոցեսում | | |
| գործողություն | | ժամանակացույց | պատասխանատուներ |
| | Ուսուցիչներին մասնակից դարձնել մասնագիտական վերապատրաստում ներին, սեմինարներին: | 2024-2029թթ. Յուրաքանչյուր ուստարի | տնօրեն,ԿԶՆԱԿ,ՏՄԱԿ,մեթոդ միավորման նախագահ |
| | Ապահովել ուսուցիչների մասնակցությունը կամավոր ատեստավորմանը և տարակարգ ստանալուն: | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | տնօրեն,մեթոդմիավորում |
| | Կազմակերպել ուսուցիչների մասնագիտական գիտելիքների, տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների յուրացմանը և կատարելագործմանը նպաստող միջոցառումներ՝վերապատրաստումներ,սեմինարներ: | 2024-2029թթ | տնօրեն,ԿԶՆԱԿ,մանկավարժական համակազմ, օպերատոր |
| | Ձեռք բերել էլեկտրոնային գրատախտակ : | 2024-2025 ուս․տարի | Համակարգող |
| Ակնկալվող վերջնարդյունք | • Անհրաժեշտ որակավորում ստացած, իրենց աշխատանքին նվիրված բարձրորակ մանկավարժ -մասնագետներ,ստեղծագործ ուսուցիչներ | | |
| | • ՏՀՏ կիրառության ընդլայնում | | |

| | |
|---|---|
| գնահատման չափանիշներ | Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվութ յունների ձևերի ու ժամանակացույցի |
| հնարավոր ռիսկեր ռիսկերը մեղմող գործողություններ | Ռիսկ- 1.Ուսուցիչների մասնագիտական կարողությունների, նորարարությունների ներդրման շահագրգռվածության պակաս:<br>2. Ժամանակակից տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառության կարողունակությունների պակաս<br>Ռիսկերը մեղմող գործողություն-<br>1.Մանկավարժական համակազմի վերապատրաստումների իրականացում,ինքնակրթության խթանում,անձնակազմի հմտությունների զարգացում(պարզևատրումներ,խրախուսումներ,պատվոգրեր և այլն)<br>2. ՏՀՏ գործիքների և նորագույն տեխնոլոգիաների ճիշտ կիրառման նպատակով վերապատրաստումների և սեմինարների կազմակերպում |
| անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաներ մարդկային ռեսուրսներ | ԿԳՄՍ, ԿԶՆԱԿ, լիազոր մարմին, պետբյուջեից ֆինանսավորում տարակարգի,կամավոր ատեստավորման համար |
| վերահսկողության մեխանիզմները | Տարեկան հաշվետվություններ և համապատասխան արձանգրություններ |
| Ֆինանսական աղբյուրներ | Պետական բյուջե |

## 1.6 ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասամատյաններին,երեխաների և աշխատակազմի անձնական գործերին, կառավարման հին թղթային ձևերին փոխարինեց էլեկտրոնային գործավարությունը:2020թվականին կորոնավիրուսի պատճառով դպրոցն անցավ հեռավար ուսուցման, պատճառ դառնալով ժամանակակից նոր ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների կիրառմանը, որը մեծ խնդիրներ առաջացրեց ուսուցիչների մոտ՝ցույց տալով նրանց ՏՀՏ գիտելիքների պակասությունը: Վերջինս շարժառիթ դարձավ մանկավարժական աշխատողների մասնակցությանը վերապատրաստման դասընթացներին և սեմինարներին : Մինչև օրս անցկացվել են բազմաթիվ սեմինարներ և վերապատրաստումներ առցանց ու առկա եղանակով,անցկացվում են նաև MS Teams միասնական կրթական հարթակի միջոցով: Դպրոցի կառավարումն իրականացվում է emis.am կայքի միջոցով: Ուսուցիչները ամենօրյա գրանցումները կատարում են matyan.emis.am կայքում: Ուսուցիչների թեմատիկ պլանները, դասղեկների, մ/մ նախագահների տարեկան հաշվետվությունները, տնօրենի տարեկան հաշվետվությունը տեղադրվում են lib.armedu.am կայքում, դասագրքերի պատվերները կատարվում են crm.dshh.am կայքի միջոցով: Դպրոցն ունի կայքէջ https://petrovka.schoolsite.am/, որտեղ

տեղադրվում են դպրոցի նախահաշիվը, հաստիքացուցակը, տարեկան և եռամսյակային հաշվետվությունները:

Ստորև ներկայացվում է ուժեղ և թույլ կողմերը.

| ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | |
|---|---|
| **Ուժեղ կողմեր** | **Թույլ կողմեր** |
| Դպրոցն ունի լավ կահավորված,ժամանակակից նորագույն տեխնոլոգիաներով համակարգչային դասասենյակ` հագեցված հեռավար դասեր անցկացնելու համար նախատեսված <<Հարմոնիա>> հիմնադրամի կողմից հատկացված ՏՀՏ սարքավորումներով/համակարգիչ,պրոյեկտոր,բազմա ֆունկցիոնալ տպիչ,տեսախցիկ,կախովի էկրան/ որտեղ անցկացվում են հեռավար և առարկայական դասեր: | «Արմաթ» լաբորատորիայի պակաս<br>ՏՀՏ գործիքների պակաս |
| Առցանց ինտերակտիվ ռեսուրսները ,վիրտուալ լաբորատորիաները օգտագործվում են տարբեր առարկաների լաբորատոր և գործնական աշխատանքների համար: | Որոշ ուսուցիչներ լավ չեն տիրապետում ՏՀՏ գործիքներին,սակայն ստանում են անհրաժեշտ աջակցություն տնօրինության և կոլեգաների կողմից |
| Ակտիվ աշխատանքներ են տարվում նոր տեխնոլոգիաների,ՏՀՏ գործիքների և մեթոդների ներդրման ուղղությամբ: | EMIS.am հարթակում էլեկտրոնային մատյանների լրացումը կատարվում է որոշակի թերություններով |
| Ուսուցիչները կարողանում են օգտվել կրթական կայքերից,բոլորը գրանցված են Teams-ի հարթակում: | Էլեկտրոնային գրատախտակի բացակայություն |
| Ուսումնադաստիարակչական աշխատանքը իրականացվում է ՏՀՏ-ի միջոցով | |
| Դպրոցի կառավարման և վարչատնտեսական գործունեության գերակշիռ մասը իրականացվում են ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների միջոցով | |
| Դպրոցի լրիվ տարածքը ապահովված է wifi ինտերնետ կապով: | |
| Ուսուցիչները դասերը անցկացնում են նաև համակարգչային դասասենյակում | |

| ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ, ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | |
|---|---|
| Նպատակների սահմանում | Ուսումնական գործընթացում ,դպրոցի կառավարման և վարչատնտեսական գործունեության մեջ ՏՀՏ գործիքների և նորարարությունների կիրառման ապահովում: |

| | | | |
|---|---|---|---|
| խնդիրների սահմանում | Դպրոցը համալրել նոր ՏՀՏ գործիքներով:<br>Իրականացնել քայլեր ուղղված մանկավարժական անձնակազմի համակարգչային կարողությունների բարելավմանը և ՏՀՏ գործիքների կիրառմանը դասապրոցեսում : | | |
| գործողություն | | ժամանակացույց | պատասխանատուներ |
| | Դպրոցը համալրել համակարգչով,էլեկտրոնային գրատախտակով | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, հաշվապահ, վարչատնտեսական համակարգող |
| | Դպրոցի գործավարությունը՝հաստիքացուցակը,դասաբաշխումը,կառավարման և խորհրդակցական մարմինների արձանագրությունները,անձնակազմի ու աշակերտների անձնական գործերը իրականացնել էլեկտրոնային տարբերակով | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, օպերատոր,հաշվապահ |
| | Դասապրոցեսի և միջոցառումների ընթացքում հնարավորինս շատ օգտագործել ՏՀՏ գործիքներ,էլեկտրոնային կրթական ռեսուրսներ և նորարարություններ | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Ուսուցիչներ, օպերատոր |
| | Էլեկտրոնային մատյանները լրացնել պատշաճ կերպով և ժամանակին | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, օպերատոր, ուսուցիչներ |
| | Գրադարանը համալրել համակարգչով,թվայնացնել գրադարանային ֆոնդը | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, օպերատոր, գրադարանավարը |
| | Բարելավվել դպրոցի կայքէջը,օգտագործել նաև ֆեյսբուքյան էջը | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Օպերատոր, |

| | | | |
|---|---|---|---|
| | Ֆինանսական հաշվետվությունները,ուսուցչի թափուր տեղի մրցույթի հայտարարությունները և այլն տեղադրել դպրոցի կայքէջում | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Օպերատոր,հաշվապահ |
| | Հաստատված ուսումնադաստիարակչական աշխատանքների,մեթոդմիավորումների ,դասղեկների աշխատանքային պլանները տեղադրել պաշարների շտեմարանում | Ծրագրի իրականաց ման ամբողջ ընթացքում | Տնօրեն, օպերատոր |
| | Կազմակերպել անձնակազմի մասնակցության ապահովում ՏՀՏ-ի վերապատրաստման դասընթացներին և փորձի փոխանակումներին | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, ԴԱԿ |
| | Կիբերանվտանգության ապահովում,հակավիրուսների կիրառում | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն,օպերատոր |
| Ակնկալվող վերջնարդյունք | • Դպրոցի գործավարության, դասապրոցեսի ընթացքում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների և նորարարությունների օգտագործում:<br>• դասամատյանների, արձանագրությունների, հաշվետվությունների էլեկտրոնային վարում,<br>• ՏՀՏ գործիքով աշխատելու անձնակազմի մոտիվացում | | |
| հնարավոր ռիսկեր ռիսկերը մեղմող գործողություններ | Ռիսկ- 1.Ֆինասական միջոցների պակասություն<br>2.Ուսուցիչների մոտիվացիայի պակաս,պասիվություն,անվստահություն նորարարական մեթոդների և ՏՀՏ գործիքների նկատմամբ:<br>Ռիսկերը մեղմող գործողություն- 1.Ուսուցիչների մասնակցության խթանում ՏՀՏ վերապատրաստումներին,սեմինարներին,վեբինարներին<br>2. Ֆինանսական միջոցների հայթայթում, ՏՀՏ գործիքների ձեռքբերում: | | |

| | |
|---|---|
| անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաներ մարդկային ռեսուրսներ | Հանդիպումներ, վերապատրաստումներ, ՏՀՏ դասընթացներ,հեռավար դասեր,էլեկտրոնային պաշարներ, ֆինանսական միջոցներ համակարգիչներ, պրոյեկտորներ, էլեկտրոնային գրատախտակ,անխափան ինտերնետ կապ,անխափան էլեկտրական հոսանք ԿԳՄՍՆ, ԿԶՆԱԿ, լիազոր մարմին, |
| վերահսկողության մեխանիզմները | Զարգացման ծրագրի կատարողականի ամենամյա հաշվետվություն, արձանագրություններ,դասալսումներ |
| Ֆինանսական աղբյուրներ | Պետական բյուջե, աշխատակիցների անձնական միջոցներ, բարերարներ, դրամաշնորհային ծրագրեր |

## 1.7 ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթության պետական չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ըստ կրթական աստիճանների,ուսումնական բնագավառները,դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները,հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը,ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները,սովորողների գնահատման ձևերը ,սանդղակը,հաշվառման կարգը:

Չափորոշիչը նպատակաուղղված է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը:

**Կրթության որակ**՝կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրագործմանը միտված կրթության կազմակերպման չափելի արդյունք,որը գնահատվում է՝հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները,կրթության կազմակերպման միջավայրը,ուսուցման ծրագրային բովանդակությունը,կրթության կազմակերպման գործընթացը և ուսումնառության գնահատված արդյունքները՝համաձայն սահմանված չափանիշների:

**Որակյալ կրթություն** նշանակում է,որ տվյալ երկիրը կրթության միջոցով կարողանում է հիմնականում հասնել իր սահմանած նպատակներին,իսկ մանկավարժական աշխատողները կարողանում են սովորողին հասցնել սահմանված արդյունքին:

Կրթության որակի գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը՝ ըստ ուսումնական առարկաների չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների և հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման:

2023-2024 ուս տարում ՀՊՉ դասարաններում կիրառվելու է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,

2) ձևավորող գնահատում,

3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

Սովորողը պետք է ունենա չափորոշչով սահմանված հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության հետևյալ բաղադրիչները՝

1. գիտելիք
2. հմտություն
3. դիրքորոշում
4. արժեքային բաղադրիչ

Կրթության որակը դպրոցում գնահատվում է հետևյալ չափանիշներով՝

1. ուսումնական գործընթացի առկա վիճակը/ աշակերտի կարիքին համապատասխան ուսուցման կազմակերպում

2. կրթական գործընթացի կատարողականը /մանկավարժական և վարչատնտեսական աշխատակիցների աշխատանքի կազմակերպման հատուկ պլանավորված մեխանիզմի առկայություն/

3. կրթական գործընթացի արդյունավետությունը/հասարակական կարիքներին համապատասխան կրթության բոլոր մասնակիցների փոխգործակցություն/

4. ուսումնադաստիարակչական միջոցառումների որակը/ դպրոցական միջոցառումների, խմբակների պարբերաբար իրականացում /:

5. դպրոցի զարգացման ծրագրերի և նախագծերի իրականացումը և դրանց արդյունավետությունը:

Վերոնշյալ կետերի նկատմամբ կիրականացվի վերահսկողություն, հետևողականություն, կմշակվի գործողությունների պլան՝ առկա սխալները, թերությունները վերացնելու համար:

<u>Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը ՝ըստ կրթական աստիճանների</u>




**<u>Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 3 ուս.տարիների համար</u>**

| Ցուցանիշը | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ | 24 | 24 | 20 | 29 |
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի25-ի դրությամբ | 22 | 21 | 20 | |
| Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը | 0 | 2 | 0 | 1 |
| Ուսումնական տարվա ընթացքում տեղափոխված սովորողների թիվը | 2 | 5 | 0 | 1 |

Ինչպես երևում է աղյուսակից 2020 թվականից մինչև 2023 թվականը հիմնականում աշակերտների թիվը նվազել է, իսկ 2023-2024 ուս.տարում կտրուկ աճել է:
Դա պայմանավորված է արտագաղթի արդեն ցածր ցուցանիշներից:

**Աշակերտների առաջադիմությունը ըստ դասարանների**

| դաս. | Առաջադիմությունը | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | *2020*-2021թթ. | | | *2021*-2022թթ. | | | *2022*-2023թթ. | | |
| | թիվը | գերազանց | լավ | թիվը | գերազանց | լավ | թիվը | գերազանց | լավ |
| I | 3 | - | - | 6 | - | - | 1 | - | - |
| II | 3 | 1 | 2 | 1 | 0 | 1 | 6 | 0 | 6 |
| III | 1 | 0 | 1 | 2 | 0 | 2 | 1 | 0 | 1 |
| IV | 1 | 0 | 0 | 1 | 0 | 1 | 2 | 0 | 2 |
| V | 6 | 2 | 3 | 1 | 0 | 1 | 1 | 0 | 1 |
| VI | 2 | 0 | 2 | 6 | 1 | 4 | 1 | 0 | 0 |
| VII | 0 | - | - | 2 | 0 | 2 | 6 | 1 | 2 |
| VIII | 2 | 0 | 2 | 0 | - | - | 2 | 0 | 2 |
| IX | 4 | 0 | 2 | 2 | 0 | 2 | 0 | - | - |
| | 22 | 3 | 12 | 21 | 1 | 13 | 20 | 1 | 14 |

<u>**Ստորև ներկայացվում է ուժեղ և թույլ կողմերը.**</u>

| Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն | |
|---|---|
| **Ուժեղ կողմ** | **Թույլ կողմ** |
| Կիրառվում են համապատասխան | Լաբորատորիաների և անհրաժեշտ |

| | |
|---|---|
| տեխնոլոգիաներ,ուսուցումը համապատասխանեցվում է աշակերտների կարիքներին,ապահովված է անհրաժեշտ ուսումնական և ուսումնամեթոդական փաստաթղթերով,պահանջվող սարքավորումներով ուսումնական տարածքով և գույքով | սարքավորումների պակաս |
| Կրթական գործընթացում հանձնարարությունները,կազմակերպական գործողությունները կատարվում են ժամանակին,մշակված է մանկավարժների աշխատանքների կազմակերպման հստակ մեխանիզմ,վերլուծվում են ուսումնական և աշխատանքային պլանից շեղվելու պատճառները,վերացվում են սխալները: | Նոր չափորոշիչներով մշակված որոշ դասագրքերի բացակայություն՝ 2,5,7-րդ դասարանների |
| Դպրոցում իրականացվում են բաց դասեր,փոխադարձ դասալսումներ,մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումներ: | Որոշ սովորողների կողմից միջոցառումներին, խմբականներին մասնակցության պասիվություն,մոտիվացիայի պակաս |
| Դպրոցի մանկավարժները մեթոդապես լավ են պատրաստված,բոլորն էլ մասնակցել են նոր չափորոշիչների վերապատրաստման դասընթացներին,նրանց կողմից դասերը,միջոցառումները պլանավորվում են և համապատասխանում են նպատակին: Դասերը վերլուծվում են: | |
| Աշակերտների առաջադիմության ընդհանուր մակարդակը բարձր է, որոշ սովորողների մոտ առկա են և թիմային , և անհատական ձեռք բերումներ՝ հատկապես շախմատի բնագավառում: | |

**2022-2023թ. ուսումնական տարում դպրոցում իրականացվել են՝**

Տարրական դպրոց՝

- մեթոդական զեկույց-4
- բաց դաս-4
- միջոցառում-5

Միջին դպրոց՝

- մեթոդական զեկույց-5
- բաց դաս-6
- միջոցառում-4

| Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն | | | |
|---|---|---|---|
| Նպատակների սահմանում | • Ուսուցման որակի բարձրացում<br>• Արտադպրոցական միջոցառումների կազմակերպում՝ էքսկուրսիաներ, այցելություններ մշակույթի կենտրոններ,պատմական հուշարձաններ | | |
| խնդիրների սահմանում | • Աշխատանքային կարգապահության բարձրացում<br>• Ներքին գնահատման իրացում<br>• Սովորողին շահագրգռել սիրել բնությունը, ազգային մշակույթը<br>• ՀՊՉ-ով նախատեսված վերջնարդյունքների ապահովում | | |
| գործողություն | | ժամանակացույց | պատասխանատուներ |
| | Հետևողական լինել աշխատողների աշխատանքային ռեժիմին | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն |
| | Կազմակերպել առարկայական մրցույթներ,ներդպրոցական օլիմպիադաներ,խաղեր, ուսուցման ու դաստիարակության նոր մեթոդներ ,բանավեճեր | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, դասղեկներ, ուսուցիչներ, մեթոդ միավորման նախագահ, ԴԱԿ |
| | Վերահսկել ՀՊՉ-ին համապատասխան գիտելիքների և Հմտությունների փոխանցմանը երեխաներին | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, մեթոդ միավորման նախագահ |

| | | | |
|---|---|---|---|
| | Ներքին գնահատման վերլուծություն | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, դասղեկներ, ԴԱԿ, ուսուցիչներ |
| | Այցելություններ կազմակերպել մշակույթի կենտրոններ,թանգարաններ,հուշարձաններ | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, դասղեկներ, ԴԱԿ, ուսուցիչներ |
| | Օգտագործել խրախուսական միջոցներ՝ շնորհակալագրեր,գովասանագրեր,դրամական պարգևներ այլ | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, դասղեկներ |

| | |
|---|---|
| Ակնկալվող վերջնարդյունք | Սովորողի կողմից հետաքրքրասիրության աճ հայրենի բնության և ազգային մշակույթի նկատմամբ: Կրթության որակի բարելավում; |
| հնարավոր ռիսկեր ռիսկերը մեղմող գործողություններ | Ռիսկ- Աշակերտների՝միջոցառումներին ներգրավվածության պակաս<br>Ռիսկերը մեղմող գործողություն-<br>ՀՊՉ-ով նախատեսված գործողությունների հետևողական իրականացում, նոր ուսուցման մեթոդների ներդրում<br>Արտադասարանական խմբակների ստեղծում |
| անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաներ, մարդկային ռեսուրսներ | Հանդիպումներ, արձանագրություններ,ներքին գնահատում<br>ԿԳՄՍ, ԿԶՆԱԿ, լիազոր մարմին, ՀՄԿ, ՏՄԱԿ |
| վերահսկողության մեխանիզմները | Հայտորոշիչ թեստ, թեմատիկ գրավոր աշխատանքներ, բանավոր հարցումներ |
| Ֆինանսական աղբյուրներ | Պետական բյուջե, կամավորական սկզբունք |

## 1.8 ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՌԱՐԱԿԱՆ և ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014թ. Դեկտեմբերի 1-ին ընդունվեց<<Հանրակրթության մասին>>ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>>ՀՀօրենքը,որով նախատեսվում՝հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության:Այսպիսով,ներառական կրթության համակարգի զարգացումը Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանվեց որպես **յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունք և կրթության որակի ապահովման երաշխիք**: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության,հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

Իրական ներառական դպրոցի տեսլականն այն դպրոցն է,որում բոլոր աշակերտները աջակցում են միմյանց և աջակցություն ստանում մանկավարժներից, որում յուրաքանչյուր աշակերտ իրեն ընդունված արժևորված և ապահով է զգում, և բոլոր որոշումների հիմքում ընկած են նրա ուժեղ կողմերն ու կրթական կարիքների ճանաչումն ու ապահովումը:

Ներկա պահին դպրոցում չկան ներառական կրթություն ստացող աշակերտներ, սակայն դպրոցը և ուսուցչական համակազմը պատրաստ է իրականացնել աշխատանքներ ԿԱՊԿՈՒ սովորողների հետ: Դասասենյակներում, միջանցքում, գրադարանում տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար ապահովված է ֆիզիկական մատչելիություն, հատակը գտնվում է մեկ հարթության վրա, կառուցված է թեքահարթակ:

Պետրովկայի հիմնական դպրոցի բոլոր մանկավարժները 2015 թվականին մասնակցել են ներառական կրթության վերապատրաստման դասընթացներին և պատրաստ են ստացած գիտելիքները ներդնել ԿԱՊԿՈՒ երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքներում:
Դպրոցում աշակերտների և անձնակազմի համար ստեղծված է այնպիսիուսումնական և ուսումնադաստիարակչական միջավայր, որտեղ բոլորը ազատ են արտահայտել իրենց կարծիքը, ներկայացնել նոր գաղափարներ և նախաձեռնություններ:
Դպրոցի նպատակն է ապահովել կրթված և դաստիարակված,սեփական և համամարդկային մշակութային արժեքները կրող,բռնությունից պաշտպանված,բազմակարծիք և մասնակցային որակներով օժտված աշակերտական համակազմ:

<u>Ստորև ներկայացվում է ուժեղ և թույլ կողմերը.</u>

| ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՌԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ | |
|---|---|
| **Ուժեղ կողմ** | **Թույլ կողմ** |
| Դպրոցի մանկավարժները վերապատրաստված են,ունեն անհրաժեշտ գիտելիքներ և փորձ | Խնդիրներ են առաջանում ԿԱՊԿՈՒ աշակերտների գնահատման հետ կապված, քանի որ հաճախ ծնողները հրաժարվում են ընդունել գնահատման կարևորությունը, արգելում և խոչընդոտում են հոգեբանի աշխատանքին: |

| | |
|---|---|
| Դպրոցի շենքը հարմարեցված է ներառական կրթության ապահովմանը` սանհանգույցը հարմարեցված է,միջանցքների հատակները հարթ են,կա թեքահարթակ: | Դպրոցի բակի ,դասասենյակների դռների շեմերի անհարթություն |
| Առկա է հասարակության լիիրավ անդամի գիտակցության բարձր մակարդակ | |
| Դպրոցում մյուս սովորողների կողմից  կա հարգանք և սիրալիր վերաբերմունք ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ | Խնդիրներ են առաջանում ԿԱՊԿՈՒ աշակերտների գնահատման հետ կապված, քանի որ հաճախ ծնողները հրաժարվում են ընդունել գնահատման կարևորությունը, արգելում  և խոչընդոտում են հոգեբանի աշխատանքին: |
| Դպրոցում  ապահովված  է  բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտը ,  բացառված  է սովորողի անձի նկատմամբ  ֆիզիկական և (կամ) հոգեբանական բռնությունը` բուլինգը | Դպրոցում կան  դժվարությամբ ադապտացվող երեխաներ |
| Մասնակցային, թափանցիկ և բազմակարծիք ուսումնական միջավայրի առկայություն: | |
| Բոլորը ազատ են արտահայտելու իրենց կարծիքը, ներկայանալու նոր գաղափարներով և նախաձեռնություններով: | |
| Դասապրոցեսում օգտագործվում են տարբեր մեթոդներ ամբողջ դասարանին դասապրոցեսում ներառելու համար | |
| Հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի իրականացում | |

| Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն | | | |
|---|---|---|---|
| Նպատակների սահմանում | Ապահովել կրթված և դաստիարակված, սեփական և համամարդկային մշակույթի արժեքները կրող, բռնությունից պաշտպանված, բազմակարծիք և մասնակցային որակներով օժտված աշակերտական համակազմ | | |
| խնդիրների սահմանում | • Ներառական, բազմակարծիք և մասնակցային միջավայրի ստեղծում, բուլինգի դեպքերի կանխարգելում:<br>• Զարգացնել յուրաքանչյուր սովորողի մտքի ազատության ու ստեղծագործական մտածողությունը,հնարավորություն տալ ինքնուրույն մտածելու, որոշումներ ընդունելու: | | |
| գործողություն | | ժամանակացույց | պատասխանատուներ |
| | Մանկավարժական համակազմի և ծնողների համագործակցություն բռնության, հալածանքի դեպքերը բացահայտելու և կանխարգելելու նպատակով: | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, ԴԱԿ, դասղեկներ,ծնողներ |
| | Դպրոցի աշխատակազմի ներառական կրթության ոլորտում իր գիտելիքների ու հմտությունների արդիականացնում | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն,դասղեկներ,ՏՄԱԿ,հոգեբան |
| | Սովորողներին հնարավորություն տալ գտնվելու բազմակարծիք միջավայրում, ապահովելով նրանց մտքի ազատության ու ստեղծագործական մտածողության զարգազացումը | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, ԴԱԿ, դասղեկներ |
| | Զրույցների, քննարկումների կազմակերպում աշակերտ-ծնող-հոգեբան հարաբերությունների փոխգործունեության համար, | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, ԴԱԿ, դասղեկներ,հոգեբան |

| | | | |
|---|---|---|---|
| | Զարգացնել ներառական կրթությունը՝ երեխաների և ծնողների համար պարբերաբար սեմինարների կազմակերպման միջոցով, | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, դասղեկներ, ուսուցչի օգնական |
| | Ուսումնական առարկաներից հետ մնացող աշակերտներին աջակցելու, դասերին լիարժեք մասնակցելու նպատակով ներգրավվել ուսուցչի օգնականին, հոգեբանին | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, դասղեկներ, ուսուցիչներ, հոգեբան, ուսուցչի օգնական |
| | Սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն և նախաձեռնություն | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, դասղեկներ, ուսուցիչներ, հոգեբան, ուսուցչի օգնական |

| | |
|---|---|
| Ակնկալվող վերջնարդյունք | Սովորողի գիտելիքների և հմտությունների մակարդակի, դիրքորոշումների ու արժեհամակարգի ձևավորում, որը դպրոցն ավարտելուց հետո, չափահաս կյանքում իրեն լիովին կդրսևորի և կինքնաիրացվի որպես հասարակության լիիրավ անդամ |
| հնարավոր ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ | Ռիսկ- 1.Սովորողի անբարյացկամ դրսևորումներ, որոնք խանգարում են սովորողին ուսումնառության և ուսուցչին՝ աշխատանքային գործունեության մեջ<br>2.Դպրոց-աշակերտ-ծնող կապի թուլացում<br>3. Բուլինգի դեպքեր դպրոցում<br>Ռիսկերը մեղմող գործողություն- 1.Բարձրացնել ուսուցիչների և աշակերտների մոտիվացիան<br>2.Պարբերաբար կատարել դասալսումներ<br>3.Մանկավարժների և ծնողների համագործակցություն բռնության,հալածանքի դեպքերը բացահայտելու և կանխարգելու նպատակով |

| | |
|---|---|
| անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաներ մարդկային ռեսուրսներ | Վերապատրաստումներ,դասալսումներ, դասղեկի ժամեր, գրականություն, էքսկուրսիաներ, միջոցառումներ, բաց դասեր, ՀԿ – ների ծրագրեր, զրույց, դասախոսություն, բանավեճ<br>Համագործակցային հարաբերություններ տարբեր կառույցների հետ՝ ԿԳՄՍ, ԿԶՆԱԿ, լիազոր մարմին,ՀԿ-ներ, հիմնադրամներ |
| վերահսկողության մեխանիզմները | Զարգացման ծրագրի կատարողականի ամենամյա հաշվետվություն, արձանագրություններ,գիտելիքների ստուգում |
| Ֆինանսական աղբյուրներ | Պետական բյուջե, կամավորական ներդրումներ |

## 1.9 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժի գործունեության գնահատումը ներդպրոցական կառավարման կարևորագույն գործառույթներից է: Գործընթացի ճիշտ կազմակերպման դեպքում այն դրականորեն է անդրադառնում մանկավարժի շահադրդման և մասնագիտական աճի վրա: Եթե մանկավարժի աշխատանքի գնահատումը անարդար է,ապա այն կարող է ունենալ լուրջ բացասական հետևանքներ դպրոցի համար:Ուսուցչին անհրաժեշտ է գնահատել պարբերաբար՝ողջ ուսումնական տարվա ընթացքում:

Պետրովկայի հիմնական դպրոցում բարձրագույն մանկավարժական կրթություն ունեցող ուսուցիչների թիվը՝ 6, ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների թիվը՝ 9, նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններում վերջին 3 տարում վերապատրաստում են անցել բոլոր ուսուցիչները: Ուսումնական տարվա ընթացքում հաստատությունում անցկացվել են բաց դասեր, փոխադարձ դասալսումներ, կատարվել են դասալսումներ մ/մ նախագահի և տնօրենի կողմից:

Ուսուցչին անհրաժեշտ է գնահատել պարբերաբար՝ողջ ուսումնական տարվա ընթացքում: Իր կատարած աշխատանքի համար կարելի է խրախուսել դրամական պարգևով , պատվոգրով, ինչպես նաև մրցանակով,ամսվա/տարվա/ լավագույն ուսուցիչ,դասղեկ: Խրախուսման նման մոտեցումը ուսուցիչների մոտ կառաջացնի մոտիվացիա, ինքնակրթվելու նպատակ :Առանց ինքնակրթվելու ուսուցիչը դադարում է ուսուցիչ լինել:

Ուսուցչի աշխատանքը գնահատելու համար պետք է նաև հաշվի առնել ուսուցչի ներկայացրած հաշվետվությունները:

Ստորև ներկայացվում է ուժեղ և թույլ կողմերը.

| ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ | |
|---|---|
| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
| Առկա է մանկավարժական վերապատրաստված համակազմ,կամավոր ատեստավորման մասնակցելու հնարավորություն և խրախուսում | Կան կամավոր ատեստավորումը չհաղթահարած ուսուցիչներ |
| Մանկավարժներ իրենց աշխատանքի համար խրախուսվում են՝ դրամական,շնորհակալագիր,պատվոգիր | |
| Անձնակազմի պաշտոնների նկարագիրը համապատասխանում է օրենսդրությանը | Փոխադարձ դասալսումների պակաս ՆԶՊ ուսուցչի թափուր պաշտոնի առկայություն |
| Անձնակազմում առկա է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ | ՏՀՏ-ի ոչ լիարժեք կիրառում |
| Ինքնակրթության,ինքնակատարելագործման ռեսուրսների առկայություն | Ինքնակրթությամբ զբաղվում են ոչ բոլոր ուսուցիչները |
| Վերապատրաստումներ,սեմինարներ,դասալսումներ,բաց դասեր | Փոխադարձ դասալսումների պակաս |

| Աշխատակազմի արժևորման ,խրախուսման, ինքնակրթության հնարավորություններ | |
|---|---|
| Նպատակների սահմանում | Աշխատակազմի արժևորման,խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների ստեղծում |
| խնդիրների սահմանում | Ուսուցիչների ստեղծագործական նորարական գործունեությունը խթանող խրախուսման միջոցների ստեղծում<br>Մոտիվացիա<br>Ինքնակատարելագործում,ինքնակրթություն |

| | | | |
|---|---|---|---|
| գործողություն | | ժամանակացույց | պատասխանատուներ |
| | Անձնակազմի արժեհամակարգի ձևավորում | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | տնօրեն, ԴԱԿ, մեթոդ միավորման նախագահ Կառավարման խորհուրդ, հաշվապահ |
| | Խթանել ինքնակրթության զարգացմանը՝ ստեղծելով բարենպաստ միջավայր | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | տնօրեն, մանկավարժական համակազմ, |
| | Խրախուսման և պարգևատրման մեխանիզմների ստեղծում | Յուրաքանչյուր կիսամյակ | տնօրեն, մանկավարժական համակազմ, հաշվապահ |
| Ակնկալվող վերջնարդյունք | Անձնակազմի արժեհամակարգի ձևավորում, պարգևատրման մեխանիզմների իրականացում | | |
| գնահատման չափանիշներ | խրախուսման և պարգևատրման մեխանիզմների իրականացում | | |
| հնարավոր ռիսկեր ռիսկերը մեղմող գործողություններ | Ռիսկ- 1.Ինքնակրթության և ինքնազարգացման ցանկության պակաս<br>2.Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ<br>Ռիսկերը մեղմող գործողություն- Ինքնակրթության և ինքնազարգացման բարենպաստ միջավայրի ապահովում,<br>խրախուսանքի այլ միջոցների փնտրում | | |
| անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաներ մարդկային ռեսուրսներ | ԿԳՄՍ, լիազոր մարմին, պետբյուջե, բարերարներ,դրամաշնորհային ծրագրեր | | |
| վերահսկողության մեխանիզմները | Ամենամյա հաշվետվություններ և արձանգրություններ | | |
| Ֆինանսական աղբյուրներ | Պետական բյուջե, արտաբյուջե, բարերարներ,համայնք,դրամաշնորհային ծրագրեր | | |

Դպրոցի ֆինանսական միջոցները գոյանում են պետական բյուջեից և օրենսդրությամբ չարգելվող այլ աղբյուրներից:

Դպրոցի բյուջեի պլանավորումը նախագծի կազմումը,նյութական միջոցների կարիքի գնահատումը կատարվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբերի 1-20 ընկած ժամանակահատվածում:

Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկներ ստանալու,պարզաբանումներ տալու նպատակով՝ բյուջեի նախագիծը քննարկվում է դպրոցի մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների կողմից սեպտեմբերի 21-ից մինչև նոյեմբերի 15-ը: Նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը բյուջեի նախագիծը քննարվում է դպրոցի կառավարման խորհրդում: Դպրոցի կառավարման խորհուրդը տնօրենին ներկայացմամբ քննարկում է նախագիծը և հավանություն տալիս: Դպրոցի անհրաժեշտ կարիքների համար պահանջվող ծախսերի պատվերը տնօրենը համաձայն նոր կարգի, տրամադրում է համակարգողին:Համակարգողը կազմում է նախահաշիվը և ներկայացնում է լիազոր մարմին: Եռամսյակային համամասնությանբ կազմված ծախսերի նախահաշիվները համակարգողը ներկայացնում է խորհրդի քննարկմանը, տեղադրում է դպրոցական կայքէջում:

Դպրոցը կարող է մրցույթային հիմունքներով պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում հետևյալ նպատակներով․

1. Իրականացնել հատուկ կամ լրացուցիչ կրթական և ծրագրեր արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների համար
2. Իրականացնել ուսումնամեթոդական գիտափորձ և (կամ) այլընտրանքային ծրագիր
3. Կազմակերպել դպրոցականների միջազգային օլիմպիադաների նախապատրաստական հավաքներ և դասընթացներ
4. Ստեղծել ումնամեթոդական ձեռնարկներ և ուսումնական նյութեր (այդ թվում՝ էլեկտրոնային):

Դպրոցի բյուջեի նախագծման, հաշվետվողականության և հանրայնացման գործառույթների անմիջական պատասխանատուն հանդիսանում է դպրոցի տնօրենը:

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ: Նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայքէջում: Դպրոցի առկա և ձեռք բերված գույքը հաշվառված է, կատարված է գույքագրում:

Դպրոցի բյուջեի ծախսերն ունեն հետևյալ հիմնական ուղղությունները․

- Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ
- Եկամտահարկի վճարներ
- Գրասենյակային և տնտեսական ծախսեր
- Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր /այս ուղղություններով
- Կապի ծառայությունների ծախսեր

- Էլեկտրաէներգիայի, ջեռուցման/գազի/ ծախսեր
- Կոմունալ ծառայությունների վճարներ

Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 11-ի 1790-Ա/2 հրամանով հաստատվել է **Հայաստանի Հանրապետության կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրում** ներառված ուսումնական հաստատությունների ցանկը: Այս ցանկում ընդգրկված ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը շարունակելու է իրականացվել Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի 1262-Ն հրամանին համապատասխան: Պետրովկայի հիմնական դպրոցը նույնպես այս ցանկում է: Սակայն դպրոցում գործելու են Հանրակրթության պետական չափորոշչի ներդրմամբ պայմանավորված և Նախարարության կողմից իրականացվող ֆինանսական ծրագրերը: Նոր ֆինանսական ծրագրերով և նոր ՀՊՉ –ի ներդրումով պայմանավորված բարենպաստ պայմաններ ստեղծվեցին դպրոցի բյուջեի համար:Նախ ավելացավ դասարանների թիվը՝5-ից դարձավ 7,այնուհետև ավելացավ աշակերտների թվաքանակը՝20-ից դարձավ 29, որն էլ իր հերթին խթան հանդիսացավ աշխատակիցների աշխատավարձի բարձրացմանը:Դպրոցը ունի բավարար չափով խնայված ֆինանսական միջոցներ:Խնայված միջոցները ավելանում են հեռավար դասերի ,թափուր աշխատատեղերի,ֆինանսները ճիշտ պլանավորելու հաշվին: Իմ՝ դպրոցի տնօրենի պաշտոնը ստանձնելու պահին /2013թ./ դպրոցի ուսուցիչների աշխատավարձը եղել է բազային նկատմամբ 75%,այնուհետև տարիների ընթացքում բյուջեի ճիշտ պլանավորելու հաշվին ուսուցչի դրույքաչափը դարձել է 123700 դրամ,որը փոքր դպրոցների ցուցակում բարձր ցուցանիշ է:Մինչև օրս դպրոցը ֆինանսի պակասի խնդիր չի ունեցել,պետական բյուջեից լրացուցիչ գումար չի ստացել: Վերանորոգման,գազաֆիկացման,ջեռուցման համակարգի, եվրոպատուհանների տեղադրման ծախսերըւ կատարվել են դպրոցի խնայված,կուտակված միջոցներից:

| **Բյուջեի ծախսերի հիմնական ուղղությունները** |
|---|
| Աշխատավարձ և հավելավճարներ |
| Էներգետիկ ծառայություններ |
| Գրասենյակային նյութեր |
| Կենցաղային և հանրային նյութեր |
| Աշխատողների մասնագիտական զարգացման ծառայություններ |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ |
| Պարտադիր վճարներ |
| Այլ ծախսեր /դասագիրք,գրենական պիտույքներ/ |
| ՏՀՏ սարքավորումներ |
| Դպրոցի շենքի պահպանում |
| Մասնագիտական ծառայություններ |

Ստորև ներկայացվում է ուժեղ և թույլ կողմերը.

| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ | |
|---|---|
| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
| Հաստատության պետական բյուջեն բավարարում է աշխատակիցների աշխատավարձը ժամանակին վճարելու ,դպրոցի պահպանման ծախսերի համար | |
| Խնայված միջոցները ավելանում են հեռավար դասերի,թափուր աշխատատեղերի,ֆինանսները ճիշտ պլանավորելու հաշվին | Դպրոցը չունի եկամտի այլ աղբյուրներ |
| Նախ ավելացավ դասարանների թիվը՝5-ից դարձավ 7,այնուհետև ավելացավ աշակերտների թվաքանակը՝20-ից դարձավ 29 որն էլ իր հերթին խթան հանդիսացավ աշխատակիցների աշխատավարձի բարձրացմանը | Դպրոցը ունի երկու բազմահամակազմ դասարան |
| Շենք-շինությունների ընթացիկ նորոգումների, պահպանման, վերակառուցման, գույք-սարքավորումների ձեռք բերման համար կատարվում են նպատակային ծախսեր | |
| Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը բաց է ու թափանցիկ,դպրոցի կայքէջում տեղադրվում են նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունները | |
| Բյուջեից տրամադրվում է բավարար գումար ՏՀՏ սարքերի պահպանման և նորոգման համար | |
| Դպրոցի խնայված միջոցների հաշվից կատարվել է գազաֆիկացում,BAXI ջեռուցման համակարգի տեղադրում, եվրո պատուհանների և հետնի մուտքի դռան տեղադրում | |
| Դպրոցի խնայված միջոցների հաշվից կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ, սանհանգույցի վերանորոգում,խոհանոցի և պահեստի հիմնանորոգում,սպորտդահլիճի հատակի հիմնանորոգում | |
| Ձեռք է բերվել պրոյեկտոր,հոսանքի գեներատոր,աթոռներ | |

Ստորև ներկայացվում է բյուջեի տարեկան ծախսերի մասին տեղեկություն.

| Բյուջե | 2022 | 2023 |
|---|---|---|
| Տարեկան ֆինանսավորում/սուբսիդիա տարրական և հիմնական ծրագրերով/ | 24927.9 հազար | 27372.8 |
| Որից սնունդը | 679500 | 334.0 |
| Տարեսկզբի մնացորդը | 2515,2 | 3235.6 |
| Այլ եկամուտներ /տարածքի վարձակալություն/ | 0 | |
| Դրամաշնորհ/տարակարգ ստացած ուսուցիչների | 0 | |
| Տրանսպորտային ծախսեր | 0 | |
| Տարեվերջի մնացորդ | 3235,6 | 1472.2 |

| Բյուջեյի ծախսերի հիմնական ուղղությունները | Ծրագրային 2022 | Փաստացի ծախս 2022 Հզ. Դրամ | Ծրագրային 2023 | Փաստացի ծախս 2023 Հզ. Դրամ |
|---|---|---|---|---|
| Աշխատավարձ և հավելավճարներ | 24132,7 | 22347,2 | 26437.4 | 25075.9 |
| Էներգետիկ ծառայություններ | 1000,0 | 467,7 | 800.0 | 661.1 |
| Գրասենյակային նյութեր | 100,0 | 25,4 | 80.0 | 30.1 |
| Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 253,0 | 242,8 | 314.0 | 284.6 |
| Աշխատողների մասնագիտական զարգացման ծառայություններ | 48.0 | 48.0 | 48.0 | 48.0 |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 449,4 | 427,9 | 468.0 | 468.0 |
| Ներքին գործողումներ | 150,0 | 119,0 | 119.0 | 105.0 |
| Պարտադիր վճարներ | 50,0 | 34,3 | 57.2 | 53.1 |
| Այլ ծախսեր // | | | 61.8 | 38.4 |
| Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 800,0 | 76,0 | 769.0 | 767.9 |
| Հատուկ նպատակային այլ նյութեր | 50 | 0 | 34.0 | 24.0 |
| Մասնագիտական ծառայություններ | 369,8 | 369,8 | 1090.0 | 1060.8 |

| Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծություն | | | |
|---|---|---|---|
| Նպատակների սահմանում | Բյուջետային ծախսերի ճիշտ պլանավորում,լրացուցիչ ֆինանսական միջոցների ձևավորում | | |
| խնդիրների սահմանում | • Մասնագիտական գիտելիքների,կարողությունների բարելավում<br>• Համագործակցել համայնքի հետ, գտնել հովանավորներ<br>• Դպրոցի բյուջեի արդյունավետ և նպատակային օգտագործում<br>• Մասնակցել լրացուցիչ ֆինանսական ներդրումների ծրագրերի | | |
| գործողություն | | ժամանակացույց | պատասխանատուներ |
| | Մասնակցել պետբյուջեից ֆինանսավորվող լրացուցիչ ծրագրերի | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | տնօրեն, հաշվապահ, վարչատնտեսական համակարգող |
| | Բյուջեի կատարողականի գրագետ աշխատանք | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | տնօրեն, հաշվապահ, վարչատնտեսական համակարգող |
| | Կազմակերպել հանդիպումներ համայնքի ղեկավար կազմի ,գործունյա անհատների հետ | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող |
| | Մասնակցել հաշվապահական դասընթացների, սեմինարների,խորհրդակցությունների | Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում | տնօրեն, հաշվապահ, վարչատնտեսական համակարգող |
| Ակնկալվող վերջնարդյունք | Դպրոցի ֆինանսական միջոցների բարելավում | | |
| հնարավոր ռիսկեր ռիսկերը մեղմող գործողություններ | Ռիսկ- Լրացուցիչ ծրագրեր կազմելու մոտիվացիայի պակաս :<br>Ռիսկերը մեղմող գործողություն-<br>1.Եկամուտներին համապատասխան ծախսերի ճիշտ պլանավորում,ֆինանսական միջոցների նախահաշվի իրատեսական կազմում<br>2. Հետևողական աշխատանք լրացուցիչ ֆինանսների հայթաթման գործում | | |
| անհրաժեշտ միջոցները, նյութատեխնիկական պարագաներ մարդկային ռեսուրսներ | Նյութատեխնիկական բազա՝ հարմարեցված միջավայր<br>ԿԳՄՍ, լիազոր մարմին, համայնք, տնօրեն, հաշվապահ, վարչատնտեսական համակարգող | | |
| վերահսկողության մեխանիզմները | Ամենամյա հաշվետվություններ և համապատասխան արձանգրություններ | | |
| Ֆինանսական աղբյուրներ | Պետական բյուջե, դրամաշնորհային ծրագրեր, բարերարներ | | |

## ՌԻՍՈՒՐՍՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Ուսումնական միջավայրի ճիշտ վերլուծությունը զարգացման ծրագրի կարևոր գործոններից է: Ուսումնական միջավայրը դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների և մուլտիմեդիայի, դպրոցում ձևավորված սովորեցնելու և սովորելու ավանդույթի, դպրոցի ներսում և դպրոցից դուրս առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Այն պայմանավորված է նշված բոլոր ուղղությունների առկայությամբ և փոխկապակցվածությամբ:

Դպրոցը պետք է ձգտի, որ՝

1. դասասենյակները և առարկայական կաբինետները վերանորոգված և կահավորված լինեն նոր գույքով,
2. ապահովված լինի դասագրքերով և ուսումնական այլ գրականությամբ, սարքավորումներով և մուլտիմեդիայով,
3. դպրոցում ձևավորված լինեն հասարակական այնպիսի հարաբերություններ,որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարներին,
4. դպրոցում ձևավորված լինի սովորեցնելու և սովորելու ավանդույթ (մշակույթ):

Դպրոցում չկան միմյանց նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման, մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքեր:

<u>Ստորև ներկայացվում է ուժեղ և թույլ կողմերը.</u>

| ՌԻՍՈՒՐՍՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ | |
|---|---|
| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
| Դպրոցում ապահովված է մանկավարժական ինքնավարության,ազատության,դրական և ապահով մթնոլորտ բոլոր մասնակիցների համար | էլեկտրոնային գրադարանի բացակայություն |
| Դպրոցը ունի գեղեցիկ սպորտ դահլիճ | Մակերեսը փոքր է՝81քառ.մ, սպորտային գույքի պակասություն |
| Ունի ժամանակակից ՏՀՏ սարքավորումներով համալրված համակարգչային լսարան | Համալրված չէ էլեկտրոնյային գրատախտակով |
| Լուսավոր ու տաք , կահավորված դասասենյակներ | Լաբորատորիաների բացակայություն,հնամաշ աշակերտական սեղաններ |
| Բազմափորձ ու հմուտ մանկավարժներ | |
| Բուլինգի բացակայություն | |
| Բուժքույրի մշտական ներկայություն | |
| Դպրոցի տարածքը ցանկապատված է, | |
| Ունի անհրաժեշտ սարքավորումներով հագեցված, հիմնովին վերանորոգված խոհանոց և ճաշարան | |

## ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ:

ՀՀ կրթության, գիտության,մշակույթի և սպորտի նախարարի 2020թ. սեպտեմբերի 8-ի հ. 28-ն հրամանով հաստատված է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը՝

1. Էլեկտրոնային դասամատյաններ, ոչ պետական ուսումնական հաստատությունների դեպքում՝ այլ էլեկտրոնային կամ թղթային մատյաններ՝ հիմնադրի որոշմամբ
2. Աշխատողի անձնական էլեկտրոնային գործ
3. Սովորողի անձնական էլեկտրոնային գործ
4. Միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան
5. Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան
6. Ավարտական, պետական ավարտական, փոխադրական, էքստեռն քննությունների և գիտելիքների ստուգման արձանագրություններ
7. Էլեկտրոնային հաստիքացուցակ
8. Տարիֆիկացիոն մատյան, ոչ պետական ուսումնական հաստատությունների դեպքում՝ հիմնադրի որոշմամբ
9. Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի արձանագրություն.
10. Ուսուցիչների բաց թողած և փոխարինված դասաժամերի հաշվառման մատյան
11. Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով
12. Դասալսումների արդյունքների արձանագրություն
13. Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան, տնօրենի տեղակալների, առարկայական մեթոդական միավորումների ղեկավարների, դասղեկների աշխատանքային պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով
14. Սովորողների շարժի մատյան

Ամենօրյա գործունեությունը կանոնակարգելու նպատակով դպրոցն իր իրավասության սահմաններում կարող է նաև մշակել, օգտագործել այլ փաստաթղթեր: Անհրաժեշտության դեպքում մշակվում և գործածության մեջ են դրվում ներքին գործածության համար նախատեսված իրավական նոր ակտեր (օրինակ՝ ներքին կարգապահական կանոններ, աշխատակարգեր և այլն):

# ՄԱՍ 2. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ,ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ, ՀՆԱՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐԸ, ԱՆՀԱՐԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Դպրոցի զարգացման ծրագրի հիմնական նպատակն է դպրոցի կրթական միջավայրի ձևավորումը, կրթության գործընթացի բոլոր մասնակիցների թիմային, համագործակցված աշխատանքի արդյունքում որակյալ և հասանելի կրթության ապահովումը՝ ՀՀ Սահմանադրության պահանջներին համապատասխան:

Ստորև նպատակները սահմանվում են ըստ ոլորտների.

| ՈԼՈՐՏ | ՆՊԱՏԱԿ |
|---|---|
| Ռուսմնական միջավայր | Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական/ֆիզիկական/ միջավայրի ապահովում: Բացօթյա մարզահրապարակի կառուցում, բակային տարածքի բարեկարգում |
| Կադրեր | Մանկավարժական համակազմի մասնագիտական ունակությունների զարգացում: Առարկայական, մեթոդական, ՏՀՏ կիրառման միջոցով ուսման որակի զարգացում: |
| Ռեսուրսներ | Ցուցադրական/դիդակտիկ/ նյութերով,ՏՀՏ գործիքներով դասավանդման արդյունավետության բարձրացմանը նպաստում |
| Ուսումնական գործընթաց | • Սովորողների կրթության, դաստիարակության իրականացում նոր չարորշիչներին համապատասխան: Կրթության որակի բարձրացում<br>• Ներառական կրթության և հավասարության ապահովում:<br>• Սովորողների կողմից մասնագիտական կողմնորոշման և ուղղորդվածության համապատասխան մակարդակի ապահովում |
| Դաստիարակության գործընթաց/արժեքների ձևավորում,քաղաքացիական կրթության ապահովում,համայնքային կյանքում ներգրավում/ | • Դպրոցում աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ, ծնող-ուսուցիչ առողջ աշխատանքային հարաբերությունների ապահովում:Դպրոց- համայնք կապի ամրապնդում:<br>• Դպրոցում սովորողների և աշխատակազմի բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում:<br>• Սովորողների հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում: Խորհրդակցական մարմինների ներգրավվածություն սովորողների դաստիարակչական մակարդակի բարձրացման մեջ: |

Դպրոցի զարգացման ծրագրի հիմնական ռազմավարական նպատակին հասնելու անհրաժեշտ խնդիրները.

- դպրոցի գործունեությունը կանոնակարգող նորմատիվային փաստաթղթերի փաթեթի ստեղծումը,
- դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացումը,
- դպրոցի առարկայական դասասենյակների, լաբորատորիաների ստեղծումը և կահավորումը,
- դպրոցի բակի վերանորագման իրականացումը,
- դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական որակավորման բարձրացումը,
- սովորողների գործնական հմտությունների զարգացմանն ուղղված ուսուցման ժամանակակից մեթոդների ներդնում,
- մասնագիտական կողմնորոշման և հետագա կրթության համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորումը,
- աշակերտական ինքնակառավարման մարմինների գործունեության կատարելագործումը,
- սովորողների առողջության պահպանմանն ուղղված ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարելագործումը,
- դպրոց-ծնող-համայնք կապերի ամրապնդումը,
- Ժամանակակից կրթական պահանջներին համապատասխան բացօթյ մարզահրապարակի կառուցում
- ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետության բարձրացումը,

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | Պատասխանատուներ | Կատարման ժամանակացույց |
|---|---|---|
| Մանկավարժական համակազմի և ծնողների համագործակցություն բռնության, հալածանքի դեպքերը բացահայտելու և կանխարգելելու նպատակով: | Տնօրեն, դասղեկ,ծնող | 2024-2029 թթ. |
| Ուսումնասիրել չափորոշչային նոր պահանջները և մշակել դրանց ներդրման գործողությունների ծրագիր: | Տնօրինություն,մ/մ | 2024-2025թթ |
| Կազմակերպել անձնակազմի մասնակցության ապահովում ՏՀՏ-ի վերապատրաստման դասընթացներին և փորձի փոխանակումներին: | Տնօրինություն, օպերատոր | 2024-2029թթ |

| | | |
|---|---|---|
| Կազմակերպել վերապատրաստման դասընթացներ նախագծային ուսուցման, ուսումնահետազոտական աշխատանքների անցկացման վերաբերյալ: | Տնօրինություն, օպերատոր, վերապատրաստված ուսուցիչներ | 2024-2025թթ |
| Վերահսկել ուսուցիչների գործունեությունը, ցուցաբերել անհրաժեշտ օժանդակություն և ապահովել նոր ստացած գիտելիքների , հմտությունների կիրառումը: | Տնօրենություն, մեթոդմիավորում, օպերատոր | 2024-2029թթ |
| Կազմակերպել մեթոդական սեմինարներ, քննարկումներ: | Տնօրինություն,մ/մ | 2024-2029թթ |
| Համագործակցել մշակութային օջախների հետ: | Տնօրինություն | 2024-2029թթ |
| Ծնողներին ընդգրկել ուսման կարևորագույն գործառույթներում: | Տնօրինություն, ուսուցիչներ, դասղեկ,ծնող | 2024-2029թթ |
| Մանկավարժական խորհրդի դերի բարձրացում՝ մանկավարժական անձնակազմի վերապատրաստումների իրականացում,ուսուցիչների մասնակցության խթանում սեմինարներին: | Տնօրեն, մ/մ,վերապատրաստված ուսուցիչներ | 2024-2025 թթ. |
| Ձևավորել հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդներ՝ խորհուրդների կազմում ընդգրկել դպրոցի զարգացման համար շահագրգռված անձանց՝ներգրավելով նյութատեխնիկական բազայի և ֆինանսական միջոցների համալրմանը: | Տնօրեն, Շրջանավարտներ, Ծնողներ, Համայնքի ներկայացուցիչներ | 2024-2027 թթ. |
| Ձեռք բերել նոր գույք և ՏՀՏ գործիքներ: | Տնօրեն,վարչատնտեսական համակարգող | 2024-2029 թթ. |
| Գտնել ֆինանսական ռեսուրսներ,դիմել բարերարների,մասնակցել դրամաշնորհային ծրագրերի,համագործակցել պետական կառավարման մարմինների, համայնքապետարանի հետ | Տնօրեն,վարչատնտեսական համակարգող | 2024-2029 թթ. |
| Կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաների: | դասղեկներ | 2024-2029 թթ. |

| | | |
|---|---|---|
| Դպրոցին մասնակից դարձնել համայնքի մաքրության, մշակութային, սպորտային, հանրապետական, մարզային և համայնքային նշանակության միջոցառումներին: | Դասղեկներ | 2024-2029 թթ. . |
| Ապահովել ուսուցիչների մասնակցությունը կամավոր ատեստավորմանը և տարակարգ ստանալուն: | Տնօրեն, ԿԳՄՍ,ԳԹԿ | 2024-2029 թթ. |
| Համագործակցել զորամասի, եկեղեցու և այլ կառույցների հետ : Կազմակերպել հայրենասիրական թեմայով միջոցառումներ: | Տնօրեն, դասղեկներ,զինղեկ | 2024-2029 թթ. |
| Դպրոցը համալրել համակարգչով,էլեկտրոնային գրատախտակով: | Տնօրեն,վարչատնտեսական համակարգող | 2024-2026 թթ. |
| Հետևողական լինել աշխատողների աշխատանքային ռեժիմին ,ներքին կարգապահական կանոններում ավելի հստակ ամրագրել ուսուցչի իրավունքների և պարտականությունների շրջանակը՝ամրապնդելով ուսուցչի հեղինակությունը դպրոցում և համայնքում: | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող | 2024 -2029 թթ. |
| Կազմակերպել առարկայական մրցույթներ,ներդպրոցական օլիմպիադաներ,խաղեր, ուսուցման ու դաստիարակության նոր մեթոդներ,բանավեճեր: | Տնօրեն, մ/մ,դասղեկ | 2024-2029 թթ. |
| Զարգացնել ներառական կրթությունը՝ երեխաների և ծնողների համար սեմինարների կազմակերպման միջոցով: | Տնօրեն, դասղեկներ,ՏՄԱԿ | 2024-2026 թթ. |
| Կիրառել անձնակազմի խրախուսման և պարգևատրման մեխանիզմներ: | Տնօրենություն,դասղեկ,մ/մ | 2024-2029թթ |

Նշված բոլոր  խնդիրները լուծելի են  առաջիկա հինգ տարիների ընթացքում՝համագործակցելով մարզային և քաղաքային իշխանությունների,ծնողական համայնքի, հովանավորների հետ,մասնակցելով տարբեր ծրագրերի,բյուջեն ճիշտ պլանավորել

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորված և իրականացված արդյունքների համեմատման գործընթաց է:

Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականությունները,այլ կերպ ասած, դպրոցի զարգացման ծրագիրն իրականացնող ու վերահսկող  շահառուների/դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններ և այլն/՝ գործողությունների արդյունքներից բավարարվածության աստիճանը::Ցուցանիշները ամբողջացնում, ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալները և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշները անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար:  Ծրագրի իրագործման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է դպրոցի կառավարման խորհուրդը:                         Յուրաքանչյուր տարվա համար պատասխանատուների կողմից ներկայացվելու են հաշվետվություններ: Կրթության ընթացիկ վիճակի մասին տեղեկություն ստանալու համար կատարվում է ներքին և արտաքին գնահատում: Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է, որի մասնակիցներն են վարչական և  մանկավարժական աշխատողները, սովորողները  և ծնողները:Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդվում է սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:Արդյունքները հետագայում օգտագործվում են դպրոցի գործունեության մեջ թերություններն ու բացթողումները ուղղելու համար:

## Կրթության որակի և առաջադիմության ուսումնադաստիարակչական աշխատանքների գնահատման չափանիշ

Կրթության որակի  գնահատումն ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունք-ների բացահայտման միջոց է: Գնահատմամբ պարզվում է յուրաքանչյուր սովորողի և դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը:

Գնահատման հիմնական նպատակն է սովորողի գիտելիքների մակարդակի, կարողությունների ու հմտությունների տիրապետման ստուգումը, արժեքային որակների ձևավորման ապահովումը և դրանց հիման վրա ուսումնական գործընթացի արդյունավետության, ուսման որակի բացահայտումն ու վերահսկումը:

Գնահատումը նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանը և ինքնազարգացմանը:

**Գնահատման հիմնական քայլերն են՝**

1. Սովորողի ուսումնական գործունեության և առաջադիմության գնահատումը, ինքնակրթության և ինքնագնահատման, կրթական մի աստիճանից մյուսին անցման հնարավորության ապահովումը, կրթության շարունակականության խրախուսումը:
2. Սովորողին ներկայացվող պահանջների կատարման, ուսումնական նյութի յուրացման աստիճանի բացահայտումը՝գիտելիքների,հմտությունների,դիրքորոշման,արժեքի գնահատում:
3. Դպրոցի գործունեության արդյունավետության բացահայտումը, ուսուցիչ-սովորող համագործակցային հարաբերությունների զարգացումը:
4. Սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակության և ծավալի ճշգրտումը:
5. Սովորողի անձնային որակների ձևավորման և վարքագծի բացահայտմանը նպաստելը, ինքնաճանաչողության ապահովումը:
6. Մանկավարժների վերապատրաստման և մասնագիտական աճի ապահովումը:
7. Չափորոշիչների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական այլ նյութերի, ուսուցման մեթոդների կատարելագործման հիմքերի ապահովումը:
8. Հանրակրթության բարեփոխման ուղղությունների հստակեցումը, բովանդակության արդիականացումն ու կրթական համակարգի համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին:
9. Սովորողի ուսումնական գործունեության արդյունքների որակավորումը,բազմազանություն և ներառականություն:
10. Դպրոցի հանդեպ ծնողների, համայնքի, հանրության վստահության ձևավորումն ու ամրապնդումը:

<u>Ընթացիկ որակի ստուգման համար մշակվում է աղյուսակ  գրավոր աշխատանքների</u>

| Դասարան | Առարկա | Աշ թիվ | Ստուգմանը մասնակից աշ.թիվ | Գնահատական | Որակ | Առաջադ րանք | Աճ | Նվազում |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | |

Ուսումնադաստիարակչական աշխատանքների գնահատման չափանիշ կարող է հանդիսանալ

| Դասարան | Դասղեկի ժամերի թիվը | Դասալսումների թիվ և վերլուծություն | Միջոցառումների թիվը | Ժողովների թիվը | Սովորողների բացակայությունը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |

| ԴՊՐՈՑՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ | |
|---|---|
| Արդյունքի գնահատման չափանիշները | Արդյունքի գնահատականը |
| | գերազանց |
| | բավարար |
| | անբավարար |

**Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի գնահատման չափանիշներ**

Ուսումնական հաստատությունն ունի ներառական կրթության թեմաներով վերապատրաստված ուսուցիչներ: Դասի պլանները մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշիչի առարկայական ծրագրերի: Դպրոցում հարմարեցումները բացակայում են: Աշխորհիրդի հանդիպումից պարզ դարձավ, որ դպրոցի սովորողների մոտ ձևավորված է հանդուրժողականություն, կարծրատիպերի վերացում ԿԱՊԿ ունեցող դասընկերներ ունենալու դեպքում: Դպրոցը իրականացնում է զրույցներ, քննարկումներ՝ ներառական կրթությանը առնչվող: Դպրոցական միջոցառումներին մասնակից են դառնում անխտիր բոլորը ,արտադպրոցական միջոցառումներին ՝ ըստ ցանկության և պահանջի Դպրոցում ազատ, անկաշկանդ քննարկումներ են կատարվում, կարծիքներ լսվում, որոշումներ կայացվում : Ժողովրդավարական կառավարման սկզբունքները լիովին ապահովված են:Ներառական կրթության համակարգում գնահատումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին արձագանքելու սովորողների տարաբնույթ առանձնահատկություններին: Դպրոցում աշխատում է բազմամասնագիտական խումբ: Գնահատումը արվում է բոլոր այն առարկաներից, որում ընդգրկված է սովորողը :Որոշակի օժանդակ նյութերի միջոցով կարելի է պարզել , թե ինչում պետք է նրանց աջակցել: Ներառական կրթության մեջ կարևոր է - ուսուցիչ- ուսուցչի օգնական –հոգեբան-ՏՄԱԿ-ծնող-աշակերտ համագործակցությունը:

## Սովորողի գնահատումը՝ ըստ ԱՈւՊ-ի պահանջների

| Անուն ,ազգանուն | Առարկա | Կարողանում է | |
|---|---|---|---|
| | | Ամբողջությամ | |
| | | Մասամբ | |
| | | Չի կարողանում | |

| ԴՊՐՈՑՈՒՄ ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՄՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ | |
|---|---|
| Արդյունքի գնահատման չափանիշները | Արդյունքի գնահատականը |
| | գերազանց |
| | բավարար |
| | անբավարար |

Գնահատման չափանիշները հնարավորություն են տալիս գնահատելու սովորողի ճանաչողական ունակությունները, երևակայությունը ,տեսողական ընկալումը, լեզուն, շոշափողական և շարժողական ակտիվությունը:

**Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման գնահատման չափանիշներ**

Անձնակազմի յուրաքանչյուր անդամի դերը կարևորվում է դպրոցում, գնահատվում, խրախուսվում՝ ելնելով աշխատանքի արդյունքից, արձանագրած արդյունավետությունից/նախագծային աշխատանքներ, միջոցառումների կազմակերպում, սովորողների գրանցած արդյունքները տարբեր մրցույթներում, աշխատողի ինքնակրթություն/: Դպրոցում առկա է անձնակազմի համար ինքնակրթության նպաստավոր պայմաններ, հնարավորություններ: Նորարարությունները խթանիչ ուժ ու պատճառ են խրախուսման ու արժևորման համար, ըստ որի արժանանում են խրախուսանքի:

| Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման գնահատման չափանիշներ | |
|---|---|
| Արդյունքի գնահատման չափանիշները | Արդյունքի գնահատականը |
| | գերազանց |
| | բավարար |
| | անբավարար |

**Դպրոց - համայնք կապերի , ծնողական համայնքի գործընկերների հետ համագործակցության , արտադպրոցական և երկարօրյա ուսուցման գնահատման չափանիշ**

Սովորողների հետ արտադպրոցական աշխատանքերը կազմակերպվում են պարբերաբար՝ ընդգրկելով տարբեր ուղղություններ: Դպրոցի երկարօրյա ուսուցման ապահովման հնարավորությունները համապատասխանում են սովորողների և նրանց ծնողների կարիքների հետ: 2023 ուս տարում 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ստեղծվել  են խմբակներ և երկարօրյա ուսուցում, իսկ 7-րդ դասարանի աշակերտները ունեն  նաև նախագծային աշխատանք կատարելու հնարավորություն:

Դպրոց- համայնք կապն առկա է  նաև շահագրգիռ կողմերի  հետ, ձևական բնույթ չի կրում: Դպրոցը համայնքի համար սոցիալ-մշակութային կենտրոն է : Ծնողական համայնքի ներգրավվածությունը շարունակական է, նպատակային հաշվետու: Ծնողներն օժանդակում են ուսումնադաստիարակչական աշխատանքներին , խրախուսում և խրախուսվում են: Երկարօրյա ուսուցումը դպրոցում իրականացվումէ ըստ կարգի, հաշվի է առնվում սովորողի կարիքները: Արդյունքը գոհացնող է

Դպրոցում խմբակը ստեղծվում է սովորողների՝

- արտադասարանական ուսումնառության և ժամանցի կազմակերպման համար,
- նախասիրությունների, հետաքրքրության տարբեր ոլորտների (գիտություն, արվեստ, զբոսաշրջություն, հայրենագիտություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ,առողջ ապրելակերպ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ և այլն) վերաբերյալ ուսումնական ծրագրերի իրականացման համար, սոցիալականացման և ինքնուրույն կենսագործունեության համար,
- մասնագիտական կողմնորոշման համար

ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան սովորողի ուսումնառության ցածր արդյունքների դեպքում առարկայական ծրագրի յուրացումը ապահովելու նպատակով կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների հիման վրա տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը կամ սովորողի դասղեկը երկարօրյա ուսուցում կազմակերպելու համար դիմում է տնօրենին՝

1) այն դասարաններում, որտեղ չի իրականացվում միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից առաջադիմության բնութագրող գնահատման միջոցով արձանագրված ցածր արդյունքներ ունենալու.

2) այն դասարաններում, որտեղ իրականացվում է միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից 2 անգամ անընդմեջ 1-3 գնահատական ստանալու դեպքերում:

Երկարօրյա խմբի պարապմունքներն անցկացվում են համապատասխան ուսումնական առարկան դասավանդող՝ տվյալ Հաստատության որևէ ուսուցչի կողմից:

Շահագրգիռ կողմերի հետ ձևավորված է արդյունավետ հաղորդակցություն, ծնողական համայնքն ակտիվորեն ներգրավված է ուսումնադաստիարակչական գործընթացում:

<u>Սովորողների հետ արտադասարանական դաստիարակչական աշխատանքների, մասնագիտական կողմնորոշման գնահատման չափանիշ</u>

| հ/հ | Բովանդակություն | գերազանց | բավարար | անբավարար |
|---|---|---|---|---|
| 1 | Արտադպրոցական միջոցառումների անցկացման որակ | | | |
| 2 | Ռազմահայրենասիրական  դաստիարակություն | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | Դպրոց-համայնք կապի որակ | | | |
| 4 | Երկարօրյա ուսուցման որակ | | | |
| 5 | և այլն | | | |

| Դպրոց - համայնք կապերի , ծնողական համայնքի գործընկերների հետ համագործակցության , արտադպրոցական և երկարօրյա ուսուցման գնահատման չափանիշ | |
|---|---|
| Արդյունքի գնահատման չափանիշները | Արդյունքի գնահատականը |
| | գերազանց |
| | բավարար |
| | անբավարար |

**Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատման չափանիշներ**

Դպրոցական բուլինգը առավել վտանգավոր է, որովհետև այդ տարիքում մարդը փնտրում է իր ճանապարհը, ինքն իրեն ու հանկարծ այդ ճանապարհին հանդիպում է բռնության, որը սովորաբար հենց այն առանձնահատկության հիմքով է լինում, որը կարող է լինել նրա վստահության, որպես անձ հաստատվելու կարևոր անկյունաքարը: Բուլինգը կարող է սթրես կամ վնաս պատճառել թիրախավորված անձին, ներառյալ ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական, ինչպես նաև՝ կրթական վնաս:

Երեխաների, հատկապես տղաների համար ֆիզիկական ուժի կիրառումը ինքնահաստատման միջոց է դառնում: Այս վարքագիծը հանգեցնում է բռնության տարածմանը :Ագրեսիվ վարքագիծ ունեցող երեխաների գործողությունները կանխելու համար անհրաժեշտ է մշակել և կիրառել հատուկ ծրագրեր և մասնագիտական մոտեցումներ:Դպրոցում բարձր է մեդիագրագիտության մակարդակը : Իրականացվում են բռնության, հալածանքի , օտարման կանխարգելման միջոցառումներ, հանդիպումներ մասնագետների հետ: Անվտանգությունն ապահովված է դպրոցում: Բարձր է անձնակազմի սովորողների , ծնողների իրազեկվածության աստիճանը, գիտեն իրենց իրավունքներն ու պարտականությունները, ճգնաժամային խնդիրների լուծման հմտությունները: Դպրոցում չի արձանագրվել օտարման, բռնության դեպքեր, վերահսկողությունը բարձր մակարդակի վրա է, պարտադիր կազմակերպվում է համապատասխան միջոցառումներ:




Իրականացվող գործողություններ՝

1. Դասղեկի ժամերին ապահովել դասընթացներ բուլինգի կանխարգելման ազդեցության վերաբերյալ
2. Իրականացնել բռնության, հալածանքի , օտարման կանխարգելման միջոցառումներ, հանդիպումներ մասնագետների հետ
3. Լսել երկու կողմին էլ՝առանց նվաստացումների,կապ պահպանել հոգեբանի հետ
4. Համայնքում իրականացնել բուլինգի առավել խոր գնահատում՝հավաքել տեղեկություններ բուլինգի, սոցիալական կլիմայի և սովորողների շրջանում բռնությունների աստիճանի վերաբերյալ

| **Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատման չափանիշներ** | |
|---|---|
| Արդյունքի գնահատման չափանիշները | Արդյունքի գնահատականը |
| | գերազանց |
| | բավարար |
| | անբավարար |

## ՍՏՈՐԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆՔ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

### Ուսումնական հաստատության շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի արդիականացում

Գնահատման ռուբրիկ

| N | Գնահատման ենթակա գործընթացը | Ակնկալվող արդյունք | Արդյունքի գնահատականը | Արդյունքի գնահատման չափանիշները |
|---|---|---|---|---|
| 1 | Ուսումնական հաստատության շենքային պայմանների և կից տարածքի բարելավում,նորամուծությունների կիրառում :<br>գործողություն - Օգտագործել խնայված ֆինանսական միջոցները, համապատասխան միջոցառումների իրականացման միջոցով գտնել ֆինանսական ռեսուրսներ, ծրագիրը իրականացնելու նպատակով դիմել բարերարների, մասնակցել դրամաշնորհային ծրագրերի, կազմակերպել աճուրդ վաճառքներ, դիմել այլ ֆոնդերի | Ունենալ ապահով, հարմարավետ, դպրոց, որը կնպաստի յուրաքանչյուր սովորողի կրթության իրավունքի իրացմանը | գերազանց | Կից տարածքը բարելավվել է,շենքի ներսի մասը վերանորոգվել է,մինի մարզադաշտը կառուցվել է |
| | | | բավարար | Շենքի ներսի մասը վերանորոգվել է |
| | | | անբավարար | Նախատեսված գործողությունները չեն իրականացվել |
| 2 | Ուսումնական միջավայրի՝ նյութատեխնիկական բազայով ապահովում,անվտանգ ուսումնական միջավայրի ստեղծում:<br>գործողություն - Օգտագործել խնայված ֆինանսական միջոցները, համապատասխան միջոցառումների իրականացման միջոցով գտնել ֆինանսական ռեսուրսներ | | գերազանց | Ձեռք են բերվել դիդակտիկ նյութեր,սարքավորումներ,դասարանները կահավորվել են անհրաժեշտ գույքով |
| | | | բավարար | Ձեռք են բերվել դիդակտիկ նյութեր,սարքավորումներ |
| | | | անբավարար | Նախատեսված գործողությունները չեն իրականացվել |

## Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմիններ

Գնահատման ռուբրիկ

| N | Գնահատման ենթակա գործողությունը | Ակնկալվող արդյունք | Արդյունքի գնահատականը | Արդյունքի գնահատման չափանիշները |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրենի և կառավարման , խորհրդակցական մարմինների կողմից իրականացվող գործառույթների կանոնակարգում և հստակեցում, դերի բարձրացում, որակական բարելավում | Կառավարման խորհրդի և տնօրենի ակտիվ համագործակցություն : | գերազանց | Տնօրենի և կառավարման, խորհրդակցական մարմինների միջև կա փոխադարձ վստահություն և համագործակցություն |
| | | | բավարար | Տնօրենի և կառավարման, խորհրդակցական մարմինների միջև կա թերահավատություն,ոչ բավարար վստահություն միմյանց հանդեպ |
| | | | անբավարար | Տնօրենի և կառավարման, խորհրդակցական մարմինների միջև չկա համագործակցություն |
| 2 | Մանկավարժական համակազմի որակական բարելավում, դասապրոցեսների կառավարման արդյունավետության բարձրացում՝ կրթական գործընթացների զարգացում: | Մանկավարժների դասավանդման և մասնագիտական որակների բարելավում,ուսուցման որակի բարձրացում | գերազանց | Մանկավարժները ակտիվորեն մասնակցում են վերապատրաստումներին, կամավոր ատեստավորման,ուսուցման որակը բարելավվել է |
| | | | բավարար | Ուսուցիչները մասնակցում են վերապատրաստումների,ուսուցման որակը չի բարելավվել |
| | | | անբավարար | Ուսուցիչների մոտիվացիան մնացել է նույնը |
| 3 | Աշակերտական խորհրդի դերի բարձրացում, նոր ծրագրերի և նախաձեռնությունների խրախուսում: | Աշակերտների ուսման նկատմամբ հետաքրքրություննների բարձրացում և ուսուցման որակի բարելավում | գերազանց | Աշակերտները ակտիվորեն մասնակցում են դպրոցի կյանքին, կազմակերպում են միջոցառումներ |
| | | | բավարար | Աշակերտների մասնակցությունը դպրոցական կյանքին ոչ լիարժեք է, բայց նկատվում է հետաքրքրության աճ |
| | | | անբավարար | Աշակերտները ցանկություն չունեն մասնակցելու դպրոցական կյանքին |

## Օգտագործվող ՏՀՏ,կրթական այլ տեխնոլոգիաներ և նորարարություններ

Գնահատման ռուբրիկ

| N | Գնահատման ենթակա գործողությունը | Ակնկալվող արդյունք | Արդյունքի գնահատականը | Արդյունքի գնահատման չափանիշները |
|---|---|---|---|---|
| 1 | Ուսումնական գործընթացում ,դպրոցի կառավարման և վարչատնտեսական գործունեության մեջ ՏՀՏ գործիքների և նորարարությունների կիրառման ապահովում: | Դպրոցի կառավարման,ուսումնադաստիարակչական գործընթացում ՏՀՏ-երի և նորարաություննների կիրառում | գերազանց | Դպրոցի գործավարությունը,աշխատակիցների հաշվետվությունները,կատարվում են էլեկտրոնային համակարգով,դասապրոցեսի ընթացքում օգտագործվում են ՏՀՏ գործիքներ, |
| | | | բավարար | Դպրոցի գործավարությունը,աշխատակիցների հաշվետվություններըկատարվում են էլեկտրոնային համակարգով մասամբ,դասապրոցեսի ընթացքում քիչ են օգտագործվում են ՏՀՏ գործիքներ |
| | | | անբավարար | Դպրոցի գործունեության մեջ չեն օգտագործվում նորագույն տեխնոլոգիաներ և նորարարություններ |

## Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն

Գնահատման ռուբրիկ

| N | Գնահատման ենթակա գործողությունը | Ակնկալվող արդյունք | Արդյունքի գնահատականը | Արդյունքի գնահատման չափանիշները |
|---|---|---|---|---|
| 1 | Ուսուցման որակի բարձրացում | Կրթության որակի բարելավում; | գերազանց | ՀՊՉ-ով նախատեսված վերջնարդյունքների ապահովում,մասնակցություն առարկայական մրցույթներին,ներդպրոցական օլիմպիադաներին,խաղերին նայլն |
| | | | բավարար | Սովորողների մոտ նկատվում է ուսման նկատմամբ հետաքրքրություն :Որոշ սովորողների կողմից միջոցառումներին, խմբականներին մասնակցության պասիվություն,մոտիվացիայի պակաս |
| | | | անբավարար | Սովորողները ցանկություն չունեն մասնակցելու կրթական գործընթացին |
| 2 | Արտադպրոցական միջոցառումների կազմակերպում՝ էքսկուրսիաներ, այցելություններ մշակույթի կենտրոններ,պատմական հուշարձաններ | Սովորողի կողմից հետաքրքրասիրության աճ հայրենի բնության և ազգային մշակույթի նկատմամբ | գերազանց | Սովորողները ակտիվորեն մասնակցում են բոլոր արտադպրոցական միջոցառումներին |
| | | | բավարար | Սովորողների մասնակցությունը արտադպրոցական միջոցառումներին ոչ լիարժեք է բայց կա հետաքրքրության աճ |
| | | | անբավարար | Սովորողները ցանկություն չունեն մասնակցելու արտադպրոցական միջոցառումներին |

## Մարդկային, բյուջետային և տեխնոլոգիական ռեսուրսներ

Գնահատման ռուբրիկ

| N | Գնահատման ենթակա գործողությունը | Արդյունքի գնահատականը | Արդյունքի գնահատման չափանիշները |
|---|---|---|---|
| 1 | Մարդկային, բյուջետային և տեխնոլոգիական ռեսուրսներ | գերազանց | Դպրոցում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, կիրառվում է նորագույն ինտերակտիվ մեթոդներ |

| | | | |
|---|---|---|---|
| | | բավարար | Դպրոցում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, չի կիրառվում նորագույն ինտերակտիվ մեթոդներ |
| | | անբավարար | Դպրոցի բարոյահոգեբանական մթնոլորտը շատ վատն է |

## Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծություն

Գնահատման ռուբրիկ

| N | Գնահատման ենթակա գործողությունը | Ակնկալվող արդյունք | Արդյունքի գնահատականը | Արդյունքի գնահատման չափանիշները |
|---|---|---|---|---|
| 1 | Բյուջետային ծախսերի ճիշտ պլանավորում, լրացուցիչ ֆինանսական միջոցների ձևավորում | Դպրոցի ֆինանսական միջոցների բարելավում | գերազանց | Դպրոցի ֆինանսական միջոցները լիարժեք բավարարում են ընթացիկ ծախսերին, հնարավորություն կա կատարելու այլ ծախսեր |
| | | | բավարար | Դպրոցի ֆինանսական միջոցները բավարարում են ընթացիկ ծախսերին, |
| | | | անբավարար | Դպրոցի ֆինանսական միջոցները չեն բավարարում ընթացիկ ծախսերին |

## Կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների ազդեցության գնահատման չափանիշներ

Գնահատման ռուբրիկ

| N | Գնահատման ենթակա գործողությունը | Ակնկալվող արդյունք | Արդյունքի գնահատականը | Արդյունքի գնահատման չափանիշները |
|---|---|---|---|---|
| 1 | Արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողների համար անհատական ուսուցման կազմակերպում | Արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողների կրթական կարիքները | գերազանց | Իրականացվել է անհատական ուսուցման պլանով ուսուցում |
| | | | բավարար | Իրականացվել է արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողների |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | լիարժեք բավարարված են | | դիտարկման նախապատրաստական աշխատանքներ |
| | | | անբավարար | Որևէ գործողություն չի իրականացվել |
| 2 | Ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար անհատական ուսուցման կազմակերպում | բավարար գնահատականի ինքնուրույն ապահովում | գերազանց | Բավարար գնահատականի ինքնուրույն ապահովում |
| | | | բավարար | Իրականացվել է սովորողների նախապատրաստական աշխատանքներ |
| | | | անբավարար | Որևէ գործողություն չի իրականացվել |

## Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Գնահատման ռուբրիկ

| N | Գնահատման ենթակա գործողությունը | Ակնկալվող արդյունք | Արդյունքի գնահատականը | Արդյունքի գնահատման չափանիշները |
|---|---|---|---|---|
| 1 | Ապահովել կրթված և դաստիարակված, սեփական և համամարդկային մշակույթի արժեքները կրող, բռնությունից պաշտպանված, բազմակարծիք և մասնակցային որակներով օժտված աշակերտական համակազմ | Սովորողի գիտելիքների և հմտությունների մակարդակի, դիրքորոշումների ու արժեհամակարգի ձևավորում, որը դպրոցն ավարտելուց հետո, չափահաս կյանքում իրեն լիովին կդրսևորի և կինքնահիրացվի որպես հասարակության լիիրավ անդամ | գերազանց | Սովորողի մոտ ձևավորված է հմտությունները, կարողությունները , արժեհամակարգը և դիրքորոշումը |
| | | | բավարար | Սովորողի մոտ ձևավորված է մասամբ հմտությունները, կարողությունները , արժեհամակարգը և դիրքորոշումը |
| | | | անբավարար | Բաղադրիչներից ոչ մեկը չի ձևավորվել սովորողի մոտ |

## Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն

Գնահատման ռուբրիկ

| N | Գնահատման ենթակա գործողությունը | Ակնկալվող արդյունք | Արդյունքի գնահատականը | Արդյունքի գնահատման չափանիշները |
|---|---|---|---|---|
| 1 | Դպրոցի աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորություններ ի ստեղծում | Անձնակազմի արժեհամակարգի ձևավորում, խրախուսման և պարգևատրման մեխանիզմների իրականացում | գերազանց | Դպրոցում անձնակազմի խրախուսումն իրականացվում է, ձևավորված է անձնակազմի արժեհամակարգը, ստեղծված է ինքնակրթության նպաստավոր միջավայր |
| | | | բավարար | Դպրոցում անձնակազմի խրախուսման համակարգը գործում է ոչ լիարժեք, հազվադեպ են անձնակազմի սեփական նախաձեռնությունները |
| | | | անբավարար | Գնահատման չափանիշների հիման վրա խրախուսում չի իրականացվում |

## Դպրոց-համայնք կապեր, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցություն, արտադպրոցական և երկարօրյա ուսուցում

Գնահատման ռուբրիկ

| N | Գնահատման ենթակա գործողությունը | Ակնկալվող արդյունք | Արդյունքի գնահատականը | Արդյունքի գնահատման չափանիշները |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի հետ սերտ կապերի ընդլայնում և համատեղ աշխատանքների իրականացում | Համայնքին և նաև բոլոր շահագրգիռ կողմերին մասնակից դարձնել դպրոցի զարգացման գործընթացին | գերազանց | Համայնքը ակնտիվորեն մասնակցում է դպրոցում կազմակերպվող, միջոցառումներին, հաճախ են կազմակերպվում հանդիպումներ շահառու կազմակերպությունների հետ |
| | | | բավարար | Համայնքը երբեմն մասնակցում է դպրոցում կատարվող միջոցառումներին |
| | | | անբավարար | Համայնքը ցանկություն չունի մասնակցելու դպրոցում կատարվող միջոցառումներին, |
| 2 | Նախագծային և հետազոտական աշխատանքների իրականացում ըստ համայնքի կարիքի | Դպրոցի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորում Սովորողների՝ իրենց նախասիրություններին համապատասխան կարողությունների զարգացում | գերազանց | Նկատվում է լրացուցիչ ֆինանսական հոսք, ավելացել է դպրոցի նկատմամբ շահագրգիռ կազմակերպությունների հետաքրքրությունը,սովորողները նախաձեռնող են և կարողունակ |
| | | | բավարար | Նկատվում է դպրոցի և հովանավորների միջև կապ, քիչ է շահագրգիռ կազմակերպությունների հետաքրքրությունը դեպի դպրոց,երեխաները ակտիվ են մասամբ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | անբավարար | Դպրոցի նկատմամբ չկա հովանավորների ուշադրություն, լրացուցիչ ֆինանսական հոսքը բացակայում է,երեխաները պասիվ են |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | Երկարօրյա խմբերի ձևավորման աշխատանքներ | Երկարօրյա խմբերի ձևավորում,սովորողիա ռաջադիմության բարելավում | գերազանց | ձևավորվել են արտադասարանական, արտադպրոցական, երկարօրյա խմբեր,սովորողի առաջադիմությունը բարելավել է |
| | | | բավարար | Ձևավորվել է երկարօրյա խումբ,առաջադիմության աճ չկա |
| | | | անբավարար | Երկարօրյա խմբեր չեն ձևավորվել |

**Հալածանքի, օտարման եվ բռնության կանխարգելման գնահատման չափանիշները**

Գնահատման ռուբրիկ

| N | Գնահատման ենթակա գործողությունը | Ակնկալվող արդյունք | Արդյունքի գնահատականը | Արդյունքի գնահատման չափանիշները |
|---|---|---|---|---|
| 1 | Հալածանքի,օտարման և բռնության կանխարգելում | Դպրոցում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորում | գերազանց | Դպրոցում ձևավորված է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ :Գործում են հալածանքի,բռնության և օտարման,վաղ բացահայտման և կանխարգելման մեխանիզմներ:Մանկավարժներն ու ծնողները իրազեկված են: |
| | | | բավարար | Դպրոցում ձևավորված է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ :Գործում են հալածանքի,բռնության և օտարման,վաղ բացահայտման և կանխարգելման քիչ մեխանիզմներ:Մանկավարժներն ու ծնողները իրազեկված են մասամբ |
| | | | անբավարար | Դպրոցում ձևավորված չէ առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ:Չեն գործում հալածանքի,բռնության և օտարման,վաղ բացահայտման և կանխարգելման մեխանիզմները:Մանկավարժներն ու ծնողները իրազեկված չեն: |

## ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

1.Ունենալ ապահով, հարմարավետ, դպրոց, որը կնպաստի յուրաքանչյուր սովորողի կրթության իրավունքի իրացմանը
2.Կառավարման խորհրդի ,մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի, աշակերտական խորհրդի և տնօրենի ակտիվ համագործակցություն:
3.Մանկավարժների դասավանդման և մասնագիտական որակների բարելավում,ուսուցման որակի բարձրացում :
4.Աշակերտների ուսման նկատմամբ հետաքրքրությունների բարձրացում և ուսուցման որակի բարելավում:
5.Դպրոցի կառավարման,ուսումնադաստիարակչական գործընթացում ՏՀՏ-երի և նորարարությունների կիրառում:
6.Կրթության որակի բարելավում; Սովորողի կողմից հետաքրքրասիրության աճ հայրենի բնության և ազգային մշակույթի նկատմամբ:
7.Դպրոցի ֆինանսական միջոցների բարելավում:
8.Սովորողի գիտելիքների և հմտությունների մակարդակի, դիրքորոշումների ու արժեհամակարգի ձևավորում, որը դպրոցն ավարտելուց հետո, չափահաս կյանքում իրեն լիովին կդրսևորի և կինքնաիրացվի որպես հասարակության լիիրավ անդամ:
9.Անձնակազմի արժեհամակարգի ձևավորում, խրախուսման և պարգևատրման մեխանիզմների իրականացում:
10.Համայնքին և նաև բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցություն դպրոցի զարգացման գործընթացին:
11.Դպրոցի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորում:
12.Սովորողների՝ իրենց նախասիրություններին համապատասխան կարողությունների զարգացում:
13.Երկարօրյա խմբերի ձևավորում,սովորողի առաջադիմության բարելավում:
14.Դպրոցում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորում:
15.Նյութատեխնիկական բազայի հարստացում

## ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:
Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումներ են.
1. դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան երկու անգամ դպրոցի տվյալ ուստարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված դպրոցի զարգացման ծրագրի դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը,
2. դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը,
3. համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավումը,
4. դպրոցի խորհրդի մասնակցությունը տնօրենության կողմից դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատմանը,
5. զարգացման ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից,
6. յուրաքանչյուր ուստարվա սկզբին տարեկան աշխատանքային պլանի մշակում,
7. յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքերի,
8. յուրաքանչյուր ուստարվա սկզբին վերանայված ծրագրի հաստատում մանկավարժական և

կառավարման խորհուրդների կողմից:

Դպրոցի կայքէջը, ինչպես նաև դպրոցի ֆեյսբուքյան էջը ակտիվորեն կծառայեն որպես իրազեկման և լուսաբանման հարթակներ:

Վերահսկողությունը կիրականացվի տարբերակված ըստ դպրոցի զարգացման ծրագրի նպատակների, ոլորտների և ժամանակահատվածի։

**Ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով նախատեսված վերահսկողությունը իրականցվում է ներդպրոցական վերահսկողության պլանով և ժամանակացույցով:**

| | Գործողություն | ժամանակացույց | պատասխանատու |
|---|---|---|---|
| 1. | Քննարկել և հաստատել ուսումնական տարվա ուսպլանը մանկխորհրդի առաջարկությամբ;<br>Կազմել և կառավարման խորհրդի քննարկմանը ներկայացնել ուս տարվա տարիֆիկացիոն ցուցակը<br>. Հաստիքացուցակը<br>.Նախահաշիվը<br>.Ներքին կարգապահական կանոնները | օգոստոսի վերջ | Տնօրեն, հաշվապահ, վարչատնտեսական համակարգող |
| 2. | .Հաստատել առարկայական մ/միավորումների ղեկավար կազմը<br>.Հերթապահության կարգը;<br>.ՌԻստարվա միջոցառումների պլանը:<br>.1-ին կիսամյակի դասացուցակը<br>. 2-րդ կիսամյակի դասացուցակը:<br>.Փոփոխությունների տարեկան աշխատանքային պլաններում<br>. Առարկայական մասնախմբերի տարեկան աշխատանքային պլանները<br>. Դասղեկների աշխատանքային տարեկան ծրագիրը<br>.Գրադարանավարի տարեկան աշխատանքային պլան | մինչև սեպտեմբերի 1-ը<br><br>մինչև հունվարի 1-ը | տնօրեն,<br>մմ նախագահ,(քանի որ դպրոցը չունի տնօրենի ուսումնական գծով տեղակալ) |
| 3. | Թեմատիկ գրավոր աշխատանքների, գործնական աշխատանքների կատարման վերահսկողություն | ուս տարվա ընթացքում | տնօրեն,<br>մմ նախագահ |
| 4 | Ուսումնասիրել ուսումնական ծրագրերի կատարողականը, էլեկտրոնային դասամատյանների, օրագրերի վարման վիճակը: Արդյունքները քննարկել տնօրինության նիստերում: | ամիսը մեկ անգամ | մասնախմբերի ղեկավարներ, դասղեկներ |
| 5 | Կիսամյակների սկզբին և ավարտին հրավիրել դասարանական, ծնողական ժողովներ՝ ձևավորել դասարանական ծնողխորհուրդներ՝ 5-7 հոգուց բաղկացած: Ծնողների մասնակցությամբ կազմակերպել | ուս տարվա ընթացքում | Դասղեկներ, ծնողներ |

| | | | |
|---|---|---|---|
| | բանավեճեր, զեկուցումներ, ընթերցումներ, նվիրված աշակերտ-դպրոց-ընտանիք կապին: | | |
| 6 | Ավարտական դասարանների գիտելիքները ստուգելու նպատակով տարեկան երկու անգամ /յուրաքանչյուր կիսամյակի համար 1 հատ/ անցկացնել ստուգողական գրավոր աշխատանքներ: Տնօրինության կողմից գրավոր աշխատանքի արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերում և մանկավարժական խորհրդի նիստում: | դեկտեմբեր, ապրիլ | տնօրեն, մասնախմբի նախագահներ |
| 7 | Դասղեկների կատարած աշխատանքների քննարկում | ուս տարվա ընթացքում | ԴԱԿ |
| 8. | Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ | ուս տարվա ընթացքում | ԴԱԿ |
| 9 | Ապահովել դպրոցի ծնողների համատեղ գործունեությունը | ուս տարվա ընթացքում | ԾԽ, դասղեկներ |
| 10 | Իրականացնել վերահսկողություն՝<br>. Նախատեսված աշխատանքների կատարման<br>.Հաճախումների հաշվառման<br>.Մատենավարության<br>.Ուսումնադաստիարակչական և ֆինանսատնտեսական գործունեության վրա:<br>Արդյունքների մասին պարբերաբար հաշվետվություն ներկայացնել կառավարման խորհրդին | յուրաքանչյուր ամիս | Տնօրեն, հաշվապահ, վարչատնտեսական համակարգող |
| 11. | Դասղեկների և դասվարների, մմ նախագահի նշանակում | օգոստոս | տնօրեն |
| 12. | Կազմակերպել ամենօրյա հերթապահություն, բարեկարգ վիճակում պահել դպրոցի շենքը, բակը: Հետևել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմանը: | ուս տարվա ընթացքում | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող |
| 13. | Հարստացնել դպրոցի ուսումնանյութական բազան, հետևել որպեսզի դասերն ընթանան ուսումնադիտական նյութերի, լաբորատոր սարքավորումների, տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառմամբ: | ուս. տարվա ընթացքում | Տնօրեն, մասնախմբի նախագահներ, վարչատնտեսական համակարգող |
| 14. | Կատարել գույքագրում | դեկտեմբեր | Տնօրեն, հաշվապահ, վարչատնտեսական համակարգող |

| | | | |
|---|---|---|---|
| 15. | Ծնողներին մասնակից դարձնել համադպրոցական միջոցառումներին արտադպրոցական, դաստիարակչական աշխատանքների քննարկման գործընթացներին: | ուս. տարվա ընթացքում | Տնօրեն,դասղեկներ |
| 16 | Հրավիրել աշակերտական և ծնողական խուրհուրդների նիստեր՝ըստ գործող կարգի և կազմել նիստերի օրակարգերը և ժամանակացույցը | ուսումնական տարվա ընթացքում | Տնօրեն, դասղեկներ |
| 17 | Յուրաքանչյուր շաբաթվա վերջում կամ գումարել տնօրինության նիստ, վերլուծել շաբաթական պլանները, քննարկել հաջորդ շաբաթվա անելիքները: | ուս.տարվա ընթացքում | տնօրեն |
| 18 | Աշակերտների օգնությամբ ձևավորել դասասենյակները և միջանցքները<br>Ձևավորել ստենդներ, վահանակներ, պատի թերթեր:<br>Կազմակերպել միջոցառումներ նվիրված հիշարժան տարելիցներին, մեծ գրողներին ու արվեստագետներին: | ուս.տարվա ընթացքում | |
| 19 | Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ: Դասղեկի գործունեության հիմքը դարձնել անհարգելի բացակայությունների նվազումը, առողջ կոլեկտիվի ձևավորումը, ազգային արժանապատվության և հպարտության ձևավորումը: | ուս.տարվա ընթացքում | դասղեկներ, դասվարներ |
| 20 | Անցկացնել առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլը: | դեկտեմբեր | կազմկոմիտե, մասնախմբի նախագահներ |
| 21 | Ուսուցիչների համար կազմակերպել դասախոսություններ սեմինարներ: Ուսումնասիրել հմուտ ուսուցիչների առաջավոր փորձը և այն տարածել դպրոցում: Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին: | ուս.տարվա ընթացքում | Տնօրինություն,օպերատոր |
| 22 | Դպրոցի տարածքում տեսանելի վայրերում և բոլոր միջանցքներում տեղադրել և փակցնել պաստառներ և հուշաթերթեր՝հակահամաճարակային անվտանգության կանոնների վերաբերյալ: | օգոստոս-սեպտեմբեր | դասղեկներ |
| 23 | Կատարել դասալսումներ հետևյալ համամասնությամբ.<br>Տնօրեն՝ շաբաթական 4-5 ժամ<br>մասնախմբի նախագահ՝ 2-3 ժամ:<br>Դասալսման արդյունքները քննարկել ուսուցչի հետ՝ դասալսման մատյանում գրելով անհրաժեշտ դիտողություններ, | ուս.տարվա ընթացքում | տնօրեն, մասնախմբի ղեկավարներ |

| | | | |
|---|---|---|---|
| | հանձնարարականներ, առաջարկություններ: | | |
| 24 | Ձևավորել պետական խորհրդանիշների ցուցադրման անկյուն | ուս.տարվա ընթացքում | զինղեկ |
| 25 | Կազմակերպել հանդիպումներ հայկական բանակի հրամանատարների, ինքնապաշտպանական մարտերի մասնակիցների հետ: | ուս.տարվա ընթացքում | զինղեկ, պատմության ուսուցիչ |
| 26 | Կազմակերպել այցելություն զոհված ազատամարտիկների հուշարձանին: | սեպտեմբերի 1-ին | զինղեկ ,ուսուցիչներ |
| 27 | ՀՀ ՊՆ N զորամասի և Պետրովկայի հիմնական դպրոցի համատեղ միջոցառումների պլանի համաձայն կազմակերպել միջոցառումներ նվիրված ՀՀ պետական տոներին, հիշատակի օրերին, զինված ուժերի զորատեսակների ստեղծման օրերին: | ուս.տարվա ընթացքում | Զինղեկ,դասղեկներ |

## ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

| N | Միջոցառում/ գործողություն | Ակնկալվող արդյունք | Սահմանված ժամկետ | Կատարված աշխատանքի նկարագրություն | Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման/ առկայության դեպքում/ պատճառները | Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |

Հաշվետվությունը պետք է ներառի յուրաքանչյուր կատարողական ցուցանիշի կատարման մասին անհրաժեշտ փաստացի տվյալներ, հիմնավորող փաստաթղթեր, վերլուծություններ: Ներդպրոցական արտաքին վերահսկողությունն իրականացվում է տարբեր պատկան մարմինների կողմից մշակված հաշվետվությունների միջոցով, իսկ ներքին վերահսկողությունը՝ նաև դպրոցի կողմից կազմված հաշվետվությունների ձևերով:

<u>Ստորև ներկայացնում ենք մի քանի հաշվետվությունների ձևեր:</u>

Ձև 1 **Սովորողների առաջադիմության թերթիկ**

| N | Սովորողների թիվը | Ավարտական քննություններում գերազանց գնահատականներր ստացածների քանակը | Ավարտական քնությունների միջին գնահատական | Ձեռքբերումներ տարբեր օլիմպիադաներում |
|---|---|---|---|---|
| | | | | |

Ձև 2 **Միջոցառումներ**

| N | Միջոցառումը | Սովորողների մասնակցությամբ կազմակերպված | Ուսուցիչների համագործակցությամբ կազմակերպված | Այլ կառույցների հետ համագործակցության արդյունքում |
|---|---|---|---|---|
| | | | | |

Ձև 3 **ֆինանսական միջոցներ**

| N | Հատկացված Ֆինանսական միջոցներ | Սովորողների ուսումնառության նպատակով ծախսված | Ուսուցիչների մասնագիտական որակների զարգացման նպատակով ծախսված | Դպրոցի շենքային պայմանների վրա ծախսված |
|---|---|---|---|---|
| | | | | |

Ձև 4

**Ուսուցչի հաշվետվություն**

| Առարկա | Դասարան | Աշակերտների թիվ | | ԿԱՊԿ ՈՒ աշակերտ | Տարեկան ժամաքանակ | | | Թեմատիկ գրավոր աշխատանք | Գործնական աշխատանք |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | տարեսկիզբ | տարեվերջ | | 1-ին կիսամ | 2-րդ կիսամ | Ընդ. | | |
| | | | | | | | | | |

Ձև 5

| Նախագծային աշխատանք | Բաց դասեր | Սեմինար, վեբինար, վերապատրաստում, ատեստավորում | Ծնողական ժողով | Դասալսումներ | Դասղեկի ժամ | Միջոցառումներ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

Ձև 6

**Բաց դասերի ժամանակացույց 2023-2024 ուստարի**

| N | Ուսուցիչ | Առարկա | Դասարան | Թեմա | Ժամանակացույց |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |

## ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

2024-2029 թվականների դպրոցի զարգացման ծրագրում տեղ գտած բոլոր դրույթներն իմ կարծիքով իրատեսական են և իրագործելի: Համոզված եմ, որ այս ծրագիրը կնպաստի խելացի,արժանապատիվ,հայրենասեր,բազմակողմանի զարգացած հասարակության ձևավորմանը:
Դպրոցի շրջանավարտը լիարժեք կտիրապետի պետական լեզվին, կունենա ՏՀՏ գործիքների օգտագործման բարձր մակարդակ,կճանաչի իր հայրենիքը, կլինի հայրենասեր, կունենա ազգային մտածողություն, նոր պահանջներին համապատասխան գիտելիքներ և պատրաստ կլինի դիմակայել նոր մարտահրավերներին: